



Գ Լ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՈՒՅՆԵՐԸ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

19

Նոյեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամերիկա-թուրքական հակասությունների շուրջ.
իրավիճակը 106-րդ բանաձևից հետո 3

Զարգացումներ Իրանի շուրջ 6

Сирия может стать очередной ядерной мишенью 9

Հակասեմիթիզմի դրսևորումներ Թուրքիայում 11

Карабахский конфликт: компромисс по заранее
заданной модели трудно достижим 15

Информационно-психологические разработки
для военно-политических целей 18

Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամի
(GFSIS) ամենամյա կոնֆերանսի շուրջ (*ծառայողական*) 23

Հակահայկական քաղաքականության
դրսևորումները Վրաստանում 25

Թուրք գրողը ծպտյալ հայերի մասին. Գերմանիայում բնակվող
թուրք գրող Քեմալ Յալչընի հարցազրույցը 28

Մահմեդական հույները Թուրքիայում 31

Հայ և հրեա համայնքներ. համագործակցության
հնարավոր միտումներ 33

ԱՄԵՐԻԿԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ. ԻՐԱՎԻՃԱԿԸ 106-րդ ԲԱՆԱՁԵՎԻՑ ՀԵՏՈ

Նոյեմբերի 15-ին Թուրքիայի բանակի ցամաքային զորքերի հրամանատար Իլքեր Բաշբուլը հայտարարեց, թե Հյուսիսային Իրաքում թուրքական զինված ուժերն անցել են լայնածավալ գործողությունների: Թեև ռազմական տեսանկյունից այդ հայտարարությունը նշանակում է իրավիճակի փոփոխություն, սակայն դրա ողջ իմաստը քաղաքական է: Ուշագրավն այն է, որ Անկարան, ի վերջո, գնում է նման ակցիայի Միացյալ Նահանգների հետ մի քանի շաբաթ վարած բանակցություններից հետո: Իհարկե, նոյեմբերի 5-ին Վաշինգտոնում կայացած Բուշ-կրտսեր-Էրդոհան բանակցությունների փաստն արդեն իսկ արդյունք էր, որին հասել էր թուրքական դիվանագիտությունը, և այդ առումով՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տան կողմից Հայոց ցեղասպանությանը վերաբերող 106-րդ Բանաձևին չանդրադառնալը¹ նշված արդյունքի մի մասն էր: Բայց Անկարայի որոշումը՝ լայնածավալ ռազմական գործողություններ սկսել հյուսիսիրաքյան քրդերի դեմ, վկայում է, որ Էրդոհանին չի հաջողվել լուծել ԱՄՆ-ի հետ ունեցած բոլոր առանցքային խնդիրները:

Սակայն գլխավոր հետևությունը պետք է դա էլ չլինի: Եթե թուրքական բանակն, իրոք, ներխուժել է կամ կներխուժի Հյուսիսային Իրաք, ապա հարցը պետք է հանգեցնել ոչ այնքան ամերիկա-թուրքական հարաբերությունների արդեն իսկ անցած փուլին, այլ թե ինչ է սպասվում սպազայում:

Ցուցիչները

Ա.թ. նոյեմբերի 6-ին հյուսիսիրաքյան Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը (ՔՏԿ)² հայտարարեց, թե իր վերահսկողության ներքո գտնվող նավթահանքերի շահագործման մասին պայմանագրեր է կնքել օտարերկրյա յոթ ընկերությունների հետ: Բայց եթե նոյեմբերի 6-ին ի հայտ եկած տեղեկությունն առնչվում էր այդ բիզնեսում ոչ այնքան ազդեցիկ կազմակերպություններին, ապա վեց օր անց՝ նոյեմբերի 12-ին, հայտնի դարձավ, որ ոչ միայն պայմանագրեր են կնքվել օտարերկրյա ևս հինգ ընկերությունների հետ, այլև այդ ընկերությունների շարքում է բրիտանա-ռուսական հայտնի *TNK-BP* նավթագազային հսկան³:

Պարզ է, որ հյուսիսիրաքյան նավթի եկամուտները կարող են որակական նոր հարթություն տեղափոխել քրդական պետության ստեղծման ընթացքը: Սակայն գլխավոր դիտարկումը պետք է դա չլինի: Իրաքում քրդերի ցանկացած հզորացման ու, առավել ևս, Քուրդիստանի իշխանությունների ինստիտուցիոնալ ամրապնդման վերաբերյալ Թուրքիայի հայտնի դիրքորոշման ֆոնին ՔՏԿ նման քայլը չէր կարող սոսկ քրդական նախաձեռնություն լինել՝ հատկապես Ա.թ. հոկտեմբերի 7-ից⁴ կտրուկ սրված թուրք-քրդական հակասությունների համատեքստում:

¹ Հոկտեմբերի 25-ին հայտնի դարձավ, որ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տանը 106-րդ բանաձևն առայժմ չի դրվի քվեարկության:

² ՔՏԿ իշխանության ներքո են գտնվում հյուսիսիրաքյան քրդական երեք նահանգները՝ Դոհուքը, Էրբիլը և Սուլեյմանիան: ՔՏԿ-ն փաստացի իշխանություն ունի նաև Իրաքի Նինավա, Քիրքուկ ու Դիյալա նահանգների որոշ հատվածների նկատմամբ: Մոտավոր հաշվարկների համաձայն՝ ներկայումս ՔՏԿ իշխանության ներքո գտնվող տարածքը կազմում է գրեթե 63 հազ. կմ²: Ըստ արևմտյան աղբյուրների՝ այսօր Իրաքում բնակվում են շուրջ 4.5 մլն քրդեր, որոնց ավելի քան 95%-ը կենտրոնացած է հենց վերոնշյալ նահանգներում: Հյուսիսիրաքյան Քուրդիստանի մայրաքաղաքն է համարվում Էրբիլ քաղաքը:

³ Այդ մոտ մեկ շաբաթվա ընթացքում ՔՏԿ-ի հետ նավթային ոլորտին առնչվող պայմանագրեր կնքած ընկերությունների շարքում են ավստրիական ու հունգարական ամենամեծ նավթագազային ընկերությունները՝ *OMV-ն* ու *MOL-ը*, հարավկորեական պետական նավթագազային ընկերությունը՝ *KNOC-ը*:

⁴ Թուրքական պաշտոնական աղբյուրների ներկայացմամբ, այդ օրը քուրդ զինյալների գրոհի արդյունքում սպանվեցին թուրք 13 զինվորականներ:

Հաջորդ կարևոր կետը երաշխիքների հարցն է: Հասկանալի է, որ քրդական նավթային (հետագայում հնարավոր է նաև գազային) նախագծերում ներգրավված բոլոր ընկերությունների համար կարևոր խնդիր է սեփական ներդրումների ապահովության հարցը: Մասնավորապես, հյուսիսիրաքյան Քուրդիստանի պարագայում այդ հանգամանքն ավելի է ընդգծվում հոկտեմբերի 9-ից Անկարայի կողմից արդեն պաշտոնական մակարդակով հայտարարվող Հյուսիսային Իրաք ներխուժելու մտադրության համատեքստում:

Եթե նախաձեռնությունների առումով մենք կարող ենք բավական հիմնավոր կերպով ենթադրել, թե Էրբիլում ունեն ամերիկացիների հավանությունը, ապա արդեն օտարերկրյա ընկերություններին տրվող երաշխիքների առումով կասկածից վեր է, որ այդպիսի երաշխիքներ և այն էլ՝ ներկայացված թուրք-քրդական առճակատման պայմաններում, կարող էին տալ միայն Վաշինգտոնում, որն էլ կբավարարեր նաև սեփական իմիջի միջոցով դրամ վաստակող նավթագազային վերոհիշյալ ընկերություններին:

Մակայն գլխավորն, այնուամենայնիվ, այլ է: Չի կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ ՔՏԿ-ի հետ կնքված պայմանագրերը կամ առնվազն դրանց մասին տեղեկությունն ի հայտ եկավ նոյեմբերի 5-ին Վաշինգտոնում կայացած Բուշ-կրտսեր-Էրդոդան բանակցություններից հետո: Թեև հանդիպման արդյունքներից էլնելով՝ ամերիկյան կողմը նախագահի մակարդակով ոչ միայն դատապարտեց Քրդական բանվորական կուսկացության (PKK) զինյալների հարձակումները թուրքական անվտանգության մարմինների վրա ու խոստացավ Անկարայի հետ կիսել հետախուզական տվյալները՝ PKK զինյալների առնչությամբ¹, սակայն փաստն այն է, որ ՔՏԿ-ի կողմից կնքված նավթային պայմանագրերն ի հայտ եկան այդ հանդիպումից հետո:

Եվ վերջապես, կարևոր մյուս հանգամանքը ՔՏԿ նավթային պայմանագրերի մեջ ներգրավված ընկերությունների կարգավիճակն է: Ուշագրավն այն չէ, որ հունգարական, ավստրիական, հարավկորեական և ամենակարևորը՝ բրիտանական քաղաքական վերնախավերի հետ լուրջ կապեր ունեցող նավթագազային՝ ըստ էության կիսապետական, ընկերությունները որոշել են մասնակցել հյուսիսիրաքյան նավթի արդյունահանմանը, այլ այն, որ նշված պետությունների մայրաքաղաքներում որոշում է կայացվել գործընթացին ներգրավվել նման կարգավիճակ ունեցող ընկերությունների մակարդակով: Հաշվի առնելով իրավիճակը՝ նման ձեռնարկը պետք է առաջին հերթին գնահատել որպես քաղաքական ակցիա:

Հետևաբար, այդ ընկերությունների կարգավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ անդրատլանտյան համագործակցության ձևաչափով ոչ միայն որոշում է կայացվել միջազգային ասպարեզում սկսել ՔՏԿ լեգիտիմացման գործընթաց, այլև այդ որոշումն իշխանությունից հեռացող Բուշ-կրտսերի վարչակազմի հերթական նախաձեռնությունը չէ սոսկ: Պետք է նույն տրամաբանության ներքո դիտարկել նաև նոյեմբերի 7-ին Իրաքի ռազմուժի Գլխավոր սպայակույտի պետ, ազգությամբ քուրդ Բաբաբր Չեբարիի հայտարարությունը, թե Պենտագոնը ծրագրում է մշտական ռազմակայան հիմնել իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլի մոտ:

Ամերիկա-թուրքական ներկայիս հակասությունների դիտարկման առումով պակաս ուշագրավ չէ նաև իրանա-թուրքական հարաբերություններում ի հայտ եկող ջերմացման առանձնացումը: Մակայն եթե նախկինում նման ջերմացման անհրաժեշտությունից էլնելով՝ երկու երկրներն էլ սահմանափակվում էին հայտարարություններով կամ երկկողմ հարաբերություններին առնչվող ակցիաներից այն կողմ չէին անցնում, ապա այսօր Թեհրանն ու Անկարան համատեղ մոտեցումներ են մշակում ու քայլեր ձեռնարկում տարածաշրջանային մակարդակով և այն էլ այնպիսի կետերի առնչությամբ, որոնք Վաշինգտոնում համարվում են առաջնային:

Չէր կարող ուշադրություն չգրավել այն փաստը, որ Սիրիայից հետո Իրանը մերձավորարևելյան միակ երկիրն էր, որ պաշտպանեց Անկարայի Հյուսիսային Իրաք ներխուժելու

¹ Նման տեղեկության ի հայտ գալուն պես անվտանգության ոլորտի շատ ամերիկացի փորձագետներ շտապեցին կասկած հայտնել՝ PKK-ի վերաբերյալ Անկարայի հետ հետախուզական տվյալներ կիսվելու Վաշինգտոնի պատրաստակամության առնչությամբ: Բացատրությունը հետևյալն էր. նույն PKK վերաբերյալ հետախուզական տվյալների մի մեծ մասը Պենտագոնը ստանում է ՔՏԿ-ից, իսկ քրդերը քրդերի դեմ հետախուզական տվյալներ չեն փոխանցի Անկարային:

մտադրությունը: Հոկտեմբերի 27-ին Թեհրանում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բարա-
ջանի հետ կայացած համատեղ մամլո ասուլիսի ժամանակ այդ մասին հայտարարեց Իրանի
արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Մանուչեհր Մոթաքին:

Մակայն էլ ավելի կարևոր են հոկտեմբերի սկզբին իրանա-թուրք-սիրիական գազային
համագործակցության վերաբերյալ ի հայտ եկած տեղեկությունները: Հոկտեմբերի 2-ին
հայտնի դարձավ, որ Իրանն ու Սիրիան համաձայնության են հանգել Թուրքիայի տարածքով
Դամասկոսին տարեկան ավելի քան 3.5 մլրդ մ³ իրանական գազ մատակարարելու հարցում,
իսկ մեկ օր անց Անկարան հայտարարեց, թե \$3.5 մլրդ-ի ներդրում է կատարելու իրանական
խոշորագույն՝ «Հարավային Փարս» գազահանքում:

Հետևություններ

Չնայած ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տանը, ի վերջո, չկայացավ Հայոց ցեղա-
սպանությանը վերաբերող 106-րդ բանաձևի քվեարկությունը, և այդ հանգամանքն ու նոյեմբերի
5-ին տեղի ունեցած Բուշ-կրտսեր-երդողան բանակցություններին հետևած հայտարարություն-
ները վկայում են, որ Վաշինգտոնն ու Անկարան կարողացել են հանգել որոշակի պայմա-
նավորվածությունների, սակայն հետևությունը պետք է լինի այն, որ երկու երկրներին առնչվող
հակասություններն, ըստ ամենայնի, այլևս առնչվում են նրանց ռազմավարական շահերին:

Թուրքիայի պարագայում անհաջողությունները Եվրամիության ուղղությամբ և էլ ավելի
վաղ գերազնահատված սեփական հնարավորությունները Կենտրոնական Ասիայում հիմք են
Անկարայի համար, որպեսզի այն կենտրոնանա Մերձավոր Արևելքի ուղղությամբ: Ինչպես
Ռուսաստանի պարագայում, Թուրքիայում նույնպես փորձում են մեծացնել սեփական ազդե-
ցությունը նախկինում իրենց՝ Օսմանյան կայսրության սահմանների մեջ գտնվող տարածքնե-
րում: Այդ իմաստով թուրքական նոր քաղաքականությունը Իրանի, Սիրիայի, Իրաքի, իսրայել-
յա-պաղեստինյան հարցի հետ կապված ավելի շատ նշված ռազմավարության մասն է, քան
կրում է իրավիճակային բնույթ:

Հետևաբար, այսօր ոչ միայն հարկավոր է խոսել ամերիկա-թուրքական լուրջ բնույթ
ունեցող հակասությունների մասին, այլև պետք է ենթադրել, որ այդ հակասությունները,
թերևս, շարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ չի ավարտվի Բուշ-կրտսերի վարչակազ-
մի օրոք սկիզբ առած ամերիկյան ակտիվ ներգրավվածությունը մերձավորարևելյան գործե-
րում: Եվ այդ իմաստով, նմանություններ կան ամերիկա-ռուսական այսօրվա հարաբերու-
թյունների ու հետխորհրդային արեայի հետ կապված:

Մարգիտ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՁ

Վերջին երկու ամիսների ընթացքում Իրանի ներքին և արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցան կարևոր զարգացումներ, որոնց մեծ մասը կապված է երկրի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունների հետ: Միջուկային հիմնահարցի ազդեցությունը բավական լուրջ է Իրանի ներքաղաքական կյանքում, որտեղ, 2008-ի խորհրդարանական և 2009-ի նախագահական ընտրություններին ընդառաջ, շարունակում են նկատվել որոշակի վերադասավորումներ:

ՌԴ նախագահի այցը Թեհրան

Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի հոկտեմբերյան այցը Թեհրան նշանավորվեց Իրան-Ռուսաստան հարաբերություններում և Իրանի միջուկային ծրագրի հետ կապված գործընթացներում նոր զարգացումներով:

Ուշադրության է արժանի Վ.Պուտինի հարցազրույցն Իրանի պետական հեռուստատեսությանը և ԻՌՆԱ գործակալությանը, որի ժամանակ ՌԴ նախագահը մատնանշեց այն հիմնական ուղղությունները, որոնց մասով ակնկալում է ՌԴ-Իրան հարաբերությունների հետագա զարգացում: Էներգետիկա, ինքնաթիռաշինություն, առևտուր և այլն: Սակայն միայն սրանով չէ, որ հետաքրքիր է Վ.Պուտինի հարցազրույցը, այլ նաև այն միանշանակ դիրքորոշմամբ, որը նա արտահայտեց Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Իրանցի լրագրողի հարցին, թե արդյոք նա կարող է խոստանալ, որ մինչև տարեվերջ կավարտվի Բուշերի կառուցումը և կսկսվի միջուկային վառելիքի մատակարարումը, Վ.Պուտինը պատասխանեց. «Ես խոստումներ եմ տվել միայն իմ մայրիկին, երբ փոքրիկ եմ եղել»: Նման պատասխանով ՌԴ նախագահը, փաստորեն, անթաքույց հասկացնել տվեց, որ Իրանի հետ միջուկային համագործակցությունը մեծապես կախված է նրա՝ միջազգային հանրության հետ միջուկային հարցերի շուրջ բանակցությունների հաջողությունից:

Անկասկած, ամենաուշագրավը Վ.Պուտին-Ա.Խամենեյի հանդիպումն էր: Վ.Պուտինը վերջին մի քանի տարիների կտրվածքով միջազգային ազդեցիկ հանրությունը ներկայացնող առաջին ղեկավարն էր, որը հանդիպեց Իրանի հոգևոր առաջնորդի հետ և հնարավորություն ունեցավ անմիջականորեն վերջինիս փոխանցել իր և Արևմուտքի՝ արդեն իսկ մեծ մասամբ ընդհանրական մոտեցումներն Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Քննարկվող հարցերից ամենակարևորն, իհարկե, պետք է համարել հենց միջուկային ծրագիրը, մանավանդ որ Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի (ԻԱԱԲԽ) քարտուղար Ալի Լարիջանին արդեն հասցրել էր հայտարարել, թե Ռուսաստանի նախագահը նոր առաջարկներ է բերել Իրան: Նշենք, որ նույն Լարիջանին հրավիրված չէր մասնակցելու Վ.Պուտին-Ա.Խամենեյի հանդիպմանը, ինչը Լարիջանիի մոտակա պաշտոնազրկման հնարավորությունը ցուցող առաջին նշաններից էր: Իրանի ԱԳՆ-ն, ի դեպ, հերքել է Լարիջանիի այն հայտարարությունը, թե Պուտինն Իրանին նոր առաջարկություններ է արել: Այն, որ Լարիջանիի հայտարարությունը միակն էր «պուտինյան առաջարկի» մասին, բավարար հիմք չի կարող համարվել պնդելու, որ ոչ մի առաջարկություն Ռուսաստանի նախագահի կողմից Իրանին չի արվել, մանավանդ որ սեպտեմբեր-հոկտեմբերը եղել են ռուս-ամերիկյան ռազմավարական երկխոսության ակտիվացման ամիսներ, իսկ այս երկխոսության էական մաս է կազմում նաև Իրանի միջուկային հիմնախնդիրը: Կարելի է ենթադրել, որ Իրանի ղեկավարությունը որոշում է կայացրել կասեցնել միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող բանակցությունների հանրային տարածումը, ինչն ակներև է իրանական մամուլի էջերում, որտեղ քննարկումները միջուկային ծրագրի շուրջ վերջին շրջանում վերածվել են ներքաղաքական բանավեճերի անբաժան մասի, ինչը պայմանավորված է գարնանը սպասվող խորհրդարանական ընտրություններով:

Ակնհայտ է, որ Իրանի հոգևոր առաջնորդ Խամենեյի և նախագահ Ահմադինեժադի միջև փոխհամաձայնեցված մոտեցում է ձևավորվել միջուկային ծրագրի հարցի վերաբերյալ, որը ենթադրում է հնարավոր զիջումների առավելագույն բացառում և բանակցային գործընթացի նվազագույն քննարկում հանրության շրջանում:

Ա.Լարիջանիի պաշտոնանկությունը

Թերևս, Ահմադինեժադ-Խամենեյի փոխհամաձայնության արդյունք է նաև Ա.Լարիջանիի հեռացումը ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնից:

Անշուշտ, Լարիջանին շարքային քաղաքական գործիչ չէ: Բացի նրանից, որ ԻԱԱԲԽ քարտուղարն էր, նա անմիջական բարեկամական կապեր ունի Իրանի հոգևոր վերնախավի մի ազդեցիկ մասի հետ: Մի կողմից՝ Ա.Լարիջանին հայտնի աստվածաբան այաթուլա Ամոլիի ազգականն է, որը նաև բավական հետաքրքիր քաղաքական փորձ ունի (իր բազմաթիվ աշխատություններում հանդես գալով ԽՍՀՄ գաղափարախոսության նկատմամբ անթաքույցատելությունամբ՝ նա 1989-ին վճռորոշ դեր է խաղացել խորհրդա-իրանական մերձեցման գործում), մյուս կողմից՝ այաթուլա Մ.Մոթահարիի փեսան է (Մոթահարին եղել է Ա.Խոմեյնիի մերձավորը և իսլամական հեղափոխության գաղափարախոսներից մեկը): Լինելով միջուկային ծրագրի վերաբերյալ կարծիք քաղաքական գծի կողմնակից՝ Ա.Լարիջանին, որպես ԻԱԱԲԽ քարտուղար և միջուկային ծրագրի հարցի շուրջ բանակցող, այժմ է ընկել կոշտ, բայց կառուցողական մոտեցումներով՝ իր գործունեության ընթացքում ոչ մի սկանդալային հայտարարություն չանելով:

Վերջին մեկ տարվա ընթացքում բավական հաճախակի էին դարձել Խամենեյի-Լարիջանի հանդիպումները (Լարիջանին ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնից ազատվելուց հետո էլ մնաց Խամենեյի անձնական ներկայացուցիչն այդ կառույցում), ինչը վկայությունն է այն իրողության, որ Լարիջանին նախագահական նստավայրից տեղափոխվել էր հոգևոր առաջնորդի նստավայր: Սա, իհարկե, չէր կարող չգրգռել Մ.Ահմադինեժադին, որի դիրքերը ներքաղաքական դաշտում բավական թուլացել են: Ակնհայտ է, որ միջուկային հիմնախնդրի կարգավորումը և Արևմուտքի հետ հարաբերությունների մասնակի լավացումը կարող են էլ ավելի թուլացնել Իրանի նախագահի դիրքերը: Այս տեսանկյունից Ա.Լարիջանիի նկատելի հաջողությունները ԵՄ արտաքին հարցերով հանձնակատար Խ.Մոլանայի հետ բանակցություններում լուրջ սպառնալիք էին Ահմադինեժադի և ծայրահեղականների համար, ինչը չէր կարող չհանգեցնել Ա.Լարիջանիի պաշտոնանկությանն ուղղված քայլերի:

Մեր համոզմամբ, Ա.Լարիջանիի պաշտոնանկությունը և նրա փոխարեն ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնում, ըստ որոշ աղբյուրների, բավական սահմանափակ ունակությունների տեր, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի վետերան Մայիդ Ջալիլիի նշանակումը Իրանի ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում նոր վերադասավորումների արդյունք են և ոչ միայն Մ.Ահմադինեժադի կամքի դրսևորում:

Փորձենք նշել, թե ինչ պատճառներ ունի և ինչ հետևանքներ կունենա Ա.Լարիջանիի պաշտոնանկությունը.

1.Արևմուտքի հետ բանակցություններում որոշակի հաջողությունների հասնելով՝ Ա.Լարիջանին կարծես թե կրկնեց իր նախորդի՝ Շ.Ռուհանիի փորձը. վերջինս 2005-ի սկզբին նույնպես մոտ էր միջուկային հարցի կարգավորմանը, սակայն Մ.Խաթամիի պաշտոնավարման ավարտը խաչ քաշեց հնարավոր իրանա-եվրոպական համաձայնագրի ստորագրման վրա: Ա.Լարիջանին Արևմուտքի հետ բանակցություններում նույնպես մոտ էր վերջնական դրական կարգավորմանը, ինչը ձեռնտու չէ ոչ միայն Մ.Ահմադինեժադին, այլև իրանական շատ քաղաքական ուժերի, քանի որ խորհրդարանական և նախագահական ընտրություններից առաջ Իրան-Արևմուտք համաձայնություններն ու առավել ևս՝ համաձայնագրերի ստորագրումը կարող են աննախադեպ մեծ ազդեցություն ունենալ Իրանի ներքաղաքական կյանքի վրա:

2.Ա.Լարիջանիի հեռացմամբ իրանական ղեկավարությունը, առնվազն տեղեկատվական դաշտում, դիմեց միջուկային հարցերում իր դիրքորոշման կարծրացման, ինչն, անկասկած,

կղանդադեցնի բանակցային գործընթացը, որն անհրաժեշտ է գրեթե բոլոր իրանական ուժերին, որոնք ակտիվորեն պատրաստվում են գալիք խորհրդարանական ընտրություններին:

3.Մ.Ահմադինեժադի մերձավոր Սայիդ Ջալիլի նշանակումը ԻԱԱԲԽ քարտուղարի պաշտոնում ամենևին չի նշանակում, թե միջուկային հարցերի շուրջ բանակցություններում որոշումներ ընդունող է դառնալու Իրանի նախագահը: ԻԱԱԲԽ քարտուղարի իրավական գործառույթների մեջ չի մտնում միջուկային հարցերի շուրջ բանակցությունների ապահովումը: Սա կարող է բերել նրան, որ Իրանում կարող է ձևավորվել նոր կենտրոն, որն իրական պատասխանատվություն կստանձնի միջուկային հարցերի շուրջ բանակցությունների համար: Նշենք, որ Ս.Լավրովի՝ նոյեմբերին Թեհրան կատարած այցելության ժամանակ հիմնական բանակցությունները միջուկային խնդրի շուրջ ՌԴ ԱԳ նախարարը վարել է Իրանի ԱԳ նախարարությունում:

Ալի Լարիջանիի պաշտոնանկությունից 5 օր անց ԱՄՆ-ը հայտարարեց Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման մասին: Ամենանշանակալին կարելի է համարել այն, որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն ընդգրկվեց ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից հաստատված ահաբեկչական կազմակերպությունների ցանկում: ԻԱԱԲԽ նոր քարտուղար Ս.Ջալիլին ԱՄՆ-ի կողմից անուղղակիորեն ճանաչվեց ահաբեկիչ:

Պետք է ասել, որ ամերիկյան պատժամիջոցներն իրենց նշանակությամբ այնքան էլ շոշափելի չեն Իրանի համար: Առավել մտահոգիչը Թեհրանի համար կարող են լինել քննարկումներն այն մասին, թե Ռուսաստանն ու ԱՄՆ-ը սկսել են «իրանական մեծ առևտուր»: Որոշ վերլուծաբաններ նոյեմբերի սկզբին կարծիք հայտնեցին, թե ԱՄՆ-ը առաջարկել է Չեխիայում և Լեհաստանում ռադարային կայաններ չտեղակայել, եթե Ռուսաստանը մասնակցի Իրանի մեկուսացմանը: Սակայն ՌԴ ԱԳՆ-ն, այդ թվում՝ պետական լրատվամիջոցների միջոցով, չափազանց արագ և հետևողական կերպով հերքեց այս տեղեկությունը, ինչը կարող է հուշել այն մասին, որ «իրանական մեծ առևտուրը» ամերիկյան տեղեկատվական ական է, որն առաջացավ Վ.Պուտինի թեհրանյան այցելությունից անմիջապես հետո և ուղղված էր իրանառուսական հակասությունների սրմանը:

Ինչևէ, Իրանը լուրջ զարգացումների փուլում է, և դրանց նշանակալի մասը կապված է ներքաղաքական կյանքի հետ: Առնվազն մինչև խորհրդարանական ընտրություններ չի կարելի սպասել որևէ խոշոր փոփոխություն Իրան-Արևմուտք հարաբերություններում: Սակայն բացառված չէ, որ նախընտրական ԱՄՆ-ում «իրանական խնդիրն» էլ ավելի հրատապ դառնա, ինչը կարող է բերել Իրան-ԱՄՆ հարաբերություններում նոր սրացումների: Ստիպված ենք նշել, որ ռազմական ընդհարման հնարավորությունը գալիք տարվա ընթացքում ամենևին էլ սպառված չէ:

*Սևակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ*

СИРИЯ МОЖЕТ СТАТЬ ОЧЕРЕДНОЙ ЯДЕРНОЙ МИШЕНЬЮ

Ситуация вокруг Сирии принимает все более загадочные обороты. В начале сентября появилась информация о том, что 6 сентября израильские ВВС разбомбили некий объект на территории Сирии.

Впервые информация об авианалете появилась, когда израильский журналист Рон Бен-Ишай из издания *Yediot Aharonot* распространил данные о том, что не только знает об атаке, но и смог побывать на месте, подвергнувшись бомбардировке. По его словам, он видел воронки, хотя не смог сделать снимков.

Уже 12 сентября в *New-York Times* появилось заявление анонимного представителя Пентагона, который подтвердил факт атаки израильских ВВС. Тогда же появились сведения о том, что якобы был разбомблен ядерный объект, который Сирии помогала строить Северная Корея. Позже появилась информация о том, что Израиль принял решение о ночном рейде через три дня после того, как в сирийский порт прибыло некое северокорейское судно с неизвестным грузом.

Британская газета *Sunday Times* также сообщила о том, что бойцы спецназа израильского генштаба «Сайерет Маткаль» проводили в Сирии секретную операцию по сбору проб почвы вокруг разбомбленного объекта. Целью операции было обнаружение радиоактивного заражения вокруг объекта.

Израильская сторона официально никак не отреагировала на сообщения об авианалете, а военная цензура ввела запрет для местных СМИ на освещение этой темы. Беньямин Нетаньяху, представляющий сейчас оппозиционные силы в Израиле, 19 сентября первым признал факт атаки. После этого появился ряд официальных намеков на то, что удар в действительности был нанесен и атаковалась цель, которая предположительно являлась ядерным объектом.

Сирия первоначально опровергла информацию о бомбежке своей территории, заявив, что атака израильских ВВС была отражена и самолеты не смогли отбомбиться. Однако в дальнейшем, в интервью ВВС президент Сирии Башар Асад постарался приуменьшить значимость израильского налета, заявив, что авиация нанесла удар по пустующим военным сооружениям. В то же время Асад конкретно не назвал места, где это случилось. Тем самым президент Сирии все же признал факт нанесения ударов. Позже сирийская сторона даже организовала поездку иностранных журналистов на территорию пригорода Дейр-эз-Зор, чтобы показать, что здесь находятся лишь сельскохозяйственные плантации и лаборатории, занимающиеся селекционированием, и что нет никаких следов разрушений, нанесенных бомбометанием.

В конце октября в американской прессе появились заявления Дэвида Олбрайта, президента неправительственной исследовательской организации Института науки и международной безопасности (*Institute for Science and International Security*), который сообщил о том, что сирийская сторона, вероятнее всего, провела работы по зачистке территории объекта, подвергнувшегося бомбардировке. По словам Олбрайта, об этом свидетельствуют фотографии местности, сделанные с помощью коммерческого спутника.

Дэвид Олбрайт заявил, что в августе на фотографиях было видно высокое, похожее на коробку здание на этапе строительства в нескольких сотнях метров от реки Евфрат, около поселка Ат-Тибна, недалеко от иракской границы. Новые фотографии заставляют предположить, что сирийские власти активно взялись за уничтожение доказательств существования проекта. «Они однозначно пытаются скрыть свидетельства, – заявил Олбрайт. – К таким трюкам уже прибегали в прошлом, но они неэффективны». Новые спутниковые фотографии четко показывают то же место, что и на прежних снимках, однако высокого здания больше нет – на его месте осталась только грязь. Грузовики и строительное оборудование, видимые на первом снимке, также исчезли. «Это было сделано быстрее, чем можно было ожидать, учитывая, что представители МАГАТЭ хотели бы посетить это место», – сказал Олбрайт. Отметим, что МАГАТЭ в течение недель после известия об израильской атаке неоднократно запрашивало у сирийских властей информацию об этом объекте.

Ранее Олбрайт сообщал, что на спутниковых снимках видны строящиеся здания, слегка напоминающие по своей конструкции северокорейский реактор. На фотографиях объекта, сделанных до 6 сентября, изображен некий огороженный комплекс зданий в уединенном месте. Одно из них представляет собой высокую коробкообразную постройку, напоминающую здания, внутри которых размещают урано-графитовые реакторы. На фото также видна постройка, которую можно идентифицировать как насосную станцию для подачи воды, используемой для охлаждения реактора.

По оценке экспертов из *Institute for Science and International Security*, по габаритам построек можно предположить, что Сирия строит урано-графитовый реактор мощностью в 20-25 мегаватт, подобный реактору, который Северная Корея построила в Йонбене. «Я вполне убежден, что Сирия пыталась построить ядерный реактор», – заявил Олбрайт.

В то же время Олбрайт признал, что доказать характер объекта сложно, в том числе потому, что крыша была возведена еще на раннем этапе строительства, а значит, нельзя было взглянуть на фундамент и увидеть какие-либо компоненты, предположительно характерные для реактора. При строительстве ядерных реакторов других типов крыша возводится лишь на последнем этапе, чтобы можно было при помощи кранов устанавливать внутри массивное оборудование.

Впрочем, другие эксперты с осторожностью подходят к подобным заявлениям, считая, что по фотографиям нельзя сделать вывода о том, что в Сирии строился именно реактор, а уж тем более, делать выводы о типе реактора.

Отметим, что МАГАТЕ высказалось категорически против бомбежек ядерных объектов. Руководитель агентства Аль-Барадеи заявил, что авианалеты негативно влияют на усилия по сдерживанию ядерного распространения: «Когда израильтяне в 1981 году уничтожили научный ядерный реактор Саддама Хусейна, каковы были последствия? Саддам Хусейн продолжил разработки втайне. Он начал создавать колоссальную подземную военную ядерную программу. Применение силы может отбросить работы в прошлое, но не искоренить проблему».

В то же время Белый дом уже начал пропагандистскую войну против Сирии. Так, через американские СМИ начала вбрасываться информация от анонимных высокопоставленных чиновников (официальный Белый дом вообще никак не комментирует израильскую атаку), что израильские спецслужбы передали администрации Буша данные о том, что Сирия строила ядерный объект с помощью Северной Кореи, а в стране присутствуют северокорейские специалисты-атомщики.

Сирия на сегодняшний день имеет небольшой китайский исследовательский реактор в Дайр аль-Хаджаре. Дальнейшие работы Дамаска были застопорены из-за сильнейшего международного давления.

То, что история с авианалетом начала раскручиваться намного позже самого события, уже говорит о том, что, вероятнее всего, Вашингтон будет использовать в дальнейшем обвинения против Дамаска в своих политических играх на Большом Ближнем Востоке.

Однако примечательным является также и другое. На днях *Al-Jazeera* распространила информацию о том, что в действительности израильские ВВС лишь прикрывали два американских бомбардировщика, которые и наносили в действительности удары по сирийской территории. Утверждается, что вторжение осуществлялось через территорию Турции, которая дала на это разрешение. И что самое интересное – речь идет о том, что удар был нанесен тактическим ядерным оружием.

Официально информация о применении тактического ядерного оружия никак не комментируется. Однако даже если его и не было, что вполне вероятно, налицо очередной этап подготовки общественного мнения к тому, что ядерное оружие может быть применено для локальных целей.

Фактически ядерный фактор все более становится элементом международной политики. Но самой большой опасностью для региона является попытка сломить общественное сознание и сделать обычным для восприятия обывателя возможность применения ядерного оружия в тактических целях. Подобное развитие событий рано или поздно повлечет за собой применение атомных бомб, после чего будет преодолен внутренний барьер, сдерживающий столь мощные силы.

Самвел Мартиросян

ՀԱԿԱՍԵՄԻԹԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հակասեմիթիզմի իսլամական օրակարգը

Թուրքիայում հակասեմիթիզմն անմիջականորեն կապ ունի իսլամական օրակարգի հետ: Որպես կանոն, հակասեմիթիզմի հիմնական բաղադրիչն է քարոզչությունն ընդդեմ հրեաների, հուդայականության, Իսրայել պետության, սիոնիզմի և մասոնականության: Թուրքիայում նմանօրինակ երևույթին հատուկ է այն նույն հոռետրականությունը, ինչը բնորոշ է հակասեմիթիզմին ընդհանուր առմամբ: Իսլամականության պարագայում հակասեմիթիզմն ամրագրվում է Ղուրանով, հադիսներով և շարիաթով: Դա նկատի է առնում հրեաների, այդ թվում նաև՝ ոչ մահմեդական փոքրամասնությունների դիտարկումը որպես զիմմի (կամ՝ ահլ ալ-զիմմա), որն իսլամական իրավունքի մեջ իրավունքների առումով մահմեդականներին ստորակա համայնքն է, որը գտնվում է իսլամական պետության կամ համայնքի հովանու ներքո և ունի որոշակի իրավական պարտավորություններ:

Հակասեմիթիզմի օրակարգում կարևոր տեղ է զբաղեցնում Թուրքիայի ազգային շահերին և իսլամականության գաղափարին հրեական գործոնի բացասական դերակատարության հարցը: Հակասեմիթիզմին հարող գործիչները Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության մի շարք դրսևորումների մեջ տեսնում են սիոնիստական խարդավանքներ: Օրինակ՝ դեռևս 1970-ականներին Արևմուտքի տնտեսական կառույցների հետ Թուրքիայի համագործակցությունը մեծ քննադատություն առաջ բերեց իսլամամետ ուժերի կողմից: Նշվեց, որ նման ծրագրերը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նպատակներ են հետապնդում և, ըստ էության, սիոնիստական խաղ են: Ըստ այդմ՝ սիոնիզմը ձգտում է համաշխարհային տիրապետության, իսկ Թուրքիան իր տնտեսական և սոցիալական համակարգերով իրականում ծառայում է Իսրայելին և սիոնիզմին, որ նպատակ ունեն Թուրքիայից անջատել մի շարք տարածքներ՝ իրենց երկիրը կառուցելու համար: Իսլամամետ ուժերը համարում են, որ Թուրքիայում քաղաքական, տնտեսական, սոցիալական և բարոյական ոլորտներում առկա մի շարք անհաջողությունների, այդ թվում՝ նույնիսկ սեռական շեղումների պատճառները սիոնիստական են:

Իսլամամետ ուժերն Իսրայելը համարում են դաշույն՝ խրված Միջին Արևելքում: Նրանց կարծիքով՝ սուլթան Աբդուլ Համիդը ճիշտ կեցվածք որդեգրեց՝ չճանաչելով Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու սիոնիստների որոշումը: Նրանց համոզմամբ՝ երիտթուրքերն իրականում հրեական ծագում ունենին: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն իր գաղտնի հանդիպումները Սալոնիկում անց էր կացնում հենց մասոնական օթյակներում:

Իսլամամետ ուժերը որոշակի դիրքորոշում ունեն Թուրքիայում ապրող հրեաների նկատմամբ, որոնք, ըստ նրանց, Օսմանյան կայսրությունում ազգային մնացյալ փոքրամասնությունների հետ միասին ապրել են հանդուրժողականության մթնոլորտում: Իսլամամետ ուժերի հոռետրականության մեջ Թուրքիայի հրեաները պետք է լինեն առավելապես թուրքեր կամ թուրքացված հրեաներ: Մեհմեդ Ջևկեթ Էյլին 1997-ի հունիսի 11-ի «Միլլի գազեթում» գրում է, որ հրեաները պետք է միշտ լավ հարաբերություններ ունենան մահմեդական մեծամասնության հետ, աջակցեն չափավոր մահմեդականներին, իսլամական շարժմանը, այլապես կորուստներ կունենան:

Հակասեմիթիզմի օրակարգի մյուս հարցադրումներն առավել հաճախ կապվում են Թուրքիայում ապրող ծպտյալ կամ կրիպտո-հրեաների (դոնմե) թեմայի հետ: Թուրքիայում կան բազմաթիվ հայտնի մշակութային, քաղաքական գործիչներ, բիզնեսմեններ, ովքեր հրեական ծագում ունեն: Այս թեման այսօր առավել քան արդիական է:

Հակասեմիթիզմի օրակարգում տեղ ունի նաև Միջին Արևելքի, մասնավորապես՝ պաղեստինա-իսրայելական կամ արաբա-իսրայելական հակամարտության խնդիրը: Պաղեստինում իրավիճակի սրումն առանձին դեպքերում հանգեցնում է համալսարաններում և մզկիթներում հակաիսրայելական ակցիաների անցկացմանը, որոնց ժամանակ Իսրայել պետության դեմ հնչում է քննադատություն, ինչի ապացույցը 2000-ի վերջին հակաիսրայելական ակցիաներն էին, երբ այրվեց Իսրայելի դրոշը: Այս համատեքստում ծայրահեղական ուժերի կողմից որպես թիրախ կարող են դիտարկվել ոչ միայն Իսրայելը, նրա դաշնակից ԱՄՆ-ը, այլև Թուրքիայի պաշտոնական հրեական համայնքը, որ կազմում է շուրջ 20.000 մարդ, որոնցից մոտ 18.000-ն ապրում են Ստամբուլում, 1500-ը՝ Իզմիրում, մնացածը՝ երկրի տարբեր հատվածներում: (Թուրքիայում գործում են շուրջ 30 սինագոգներ, որոնց կեսից ավելին՝ Ստամբուլում: Այստեղ գործում են նաև հրեական դպրոցներ, համայնքի կողմից հրատարակվում են պարբերականներ): 2000-ի դեպքերի ժամանակ թուրքական «Հիզբալլահն» իր ակցիաները գյուղական շրջաններից տեղափոխեց քաղաքային բնակավայրեր և հայտարարեց, թե թիրախ կդարձնի Թուրքիայում ապրող հրեաներին:

Թուրքիայում հակասեմիթիզմին բնորոշ է նաև Հոլոքոստի ժխտումը, չնայած 2000-ի հունվարին մասնակցելով Ստոկհոլմում Հոլոքոստին նվիրված միջազգային ֆորումին՝ ստանձնել է երկրում Հոլոքոստի պաշտոնական նշումը: 1998թ. մարտի 23-ի «Միլլի գազեթի» համարում նշված է. «Նրանք (հրեաները) կարողացան ամբողջ աշխարհին հավատացնել «հոլոքոստի» առասպելը... Միոնիստները կարողացան նաև փող կորզել բոլոր եվրոպական երկրներից և ԱՄՆ-ից: Նրանք կարողացան անել դա 6 միլիոն զոհերի ստի միջոցով...»:

Նեջմեդդին Էրբաքանը՝ հակասեմիթիզմի գաղափարախոս

Թուրքիայում հակասեմիթիզմի գաղափարախոսության հիմնական կրողներից մեկը իսլամամետ գործիչ, 1996-1997թթ. երկրի վարչապետ Նեջմեդդին Էրբաքանն է, ով դեռևս 1960-ականների վերջին իր քաղաքական գործունեության սկզբնական շրջանում «Միլլիեթ» թերթին տված հարցազրույցում նշում էր, որ աշխարհում կան երեք ուղղություններ՝ 1. կոմունիզմը, 2. սիոնիզմը, 3. ազգայնականությունը (որին, ինչպես նշում էր, պետք էր հետևել): 1970-ին, մամլո ասուլիսում, նա ասաց, որ բացասաբար է վերաբերվում Թուրքիայի արևմտականացման գործընթացին և միմյանց հետ շաղկապված հրեա-սիոնիզմ-Իսրայել եզրերին: 1970-ականներին, երբ Էրբաքանը հիմնեց Իսլամական փրկության կուսակցությունը, նրա տպագիր օրգանը՝ «Միլլի գազեթը», դարձավ հակահրեական, հակաիսրայելական և հակասիոնիստական տրամադրությունների կրող թերթ: Հետագա տարիներին հակասեմիթիզմի դրսևորումները շարունակեցին տեղ գտնել Էրբաքանի, նրա կողմից ստեղծված տարանուն կազմակերպությունների, նրա համախոհների, 1973-ին հիմնված երիտասարդական կառույցի օրակարգում:

2007թ. հուլիսին նախագահական ընտրություններին նախորդած շրջանում մի շարք հեռուստարևկերություններին տված իր հարցազրույցներում և երկրի տարբեր քաղաքներում (Անկարայում, Ստամբուլում, Տրապիզոնում, Էլազիգում, Կոնիայում) ունեցած ելույթներում Էրբաքանը վերստին արտահայտեց հակասեմիթական գաղափարներ:

Հատկանշական է, որ Էրբաքանն օգտագործում է սիոնիստ/հրեա եզրերը «բակտերիա», «ախտ» նշանակությամբ: Հրեա սիոնիստները ձգտում են հասնել համաշխարհային տիրապետության, որտեղ ֆինանսներն ու հիմնական իշխանական լծակները կգտնվեն իրենց ձեռքում: Նրանք նպատակ ունեն գրավել Մարոկկոյից մինչև Ինդոնեզիա ընկած տարածքները:

Էրբաքանը վտանգավոր սկզբնաղբյուր է համարում ավելի քան 5 հազար տարի առաջ ամրագրված հին հրեական հավատքը, որտեղ հրեաներին, որպես Աստծո ընտրյալների, իրավունք է վերապահվում գաղափարապես և նյութապես (կամ ֆիզիկապես) գերիշխել մնացած ժողովուրդների վրա, և Նեդոսի ու Եփրատի միջև ընկած տարածության մեջ կառուցել Մեծ Իսրայելը: Էրբաքանի համոզմամբ՝ հրեաների առաքելությունն ավարտված կլինի միայն այն ժամանակ, երբ քանդվի իսլամական երեք գլխավոր սրբավայրերից մեկը՝ Երուսաղեմի Ալ-Ակսա մզկիթը, և դրա տեղում կառուցվի Սողոմոնի տաճարը: Էրբաքանն ավելի հեռուն է գնում. նա համոզված է, որ բոլոր խաչակրաց արշավանքները կազմակերպել են հրեաները՝

օգտագործելով քրիստոնյաներին, և միայն սելջուկներն էին՝ Էրբաքանի նախապապերը, որ կանգնեցրին նրանց: Համաշխարհային առաջին պատերազմը նույնպես հրեաների պատվերով էր՝ նորից քրիստոնյաների միջոցով, որը հող էր նախապատրաստելու Իսրայել պետության ստեղծման համար:

Ըստ այդմ՝ սիոնիստներն էին, որ նպաստեցին քրիստոնեության պառակտմանը՝ ստեղծելով բողոքականությունը: Այսօրվա կապիտալիստական կարգուկանոնը բողոքականության կրոնական կարգուկանոնն է: Հրեաների ջանքերով ԱՄՆ-ում հիմնվեց Ավետարանական աղանդը, որը ներկայումս 90 միլիոն անդամ ունի, ամերիկացիների մեծ մասն այդ աղանդին է պատկանում: Ամերիկացիները Հիսուսին՝ Մեսիային, սպասում են Մեծ Իսրայելում, որը նրանք ձգտում են կառուցել Իրաքը և այլ երկրներ, հանուն Իսրայելի, գրավելու հաշվին:

Էրբաքանի կարծիքով՝ Չինաստանի, Հնդկաստանի և Ճապոնիայի արդյունաբերություններն իրականացվում են հրեական կապիտալով: Չնայած հրեաներն ընդամենը 30 միլիոն են, սակայն կարող են կառավարել աշխարհի 6 միլիարդ մարդկանց, քանի որ տիրապետում են հիմնական ֆինանսական ռեսուրսներին: Էրբաքանին մտահոգում է այն միտքը, որ թուրքական օդանավերը, որոնք օգտագործում են այլ երկրի օդային տարածք, պետք է Իսրայելին վճարեն տոմսային վարույթի 9%-ը: Իսկ դա նշանակում է, որ Իսրայելը այդ նույն՝ մահմեդականների վճարած փողերով գնում է զենք, ինչը կարող է ուղղորդել հենց մահմեդականների դեմ: Հենվելով «Եթե քո մայրը հրեա չէ, ուրեմն դու հրեա չես կարող լինել» կարգախոսի վրա՝ Էրբաքանը եզրակացնում է, որ հուդայականությունը ռասիստական կրոն է:

ԱԶԿ պարագան

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը և նախագահ Աբդուլահը Գյուլը, իրավամբ, համարվում են Նեջմեդդին Էրբաքանի հոգևոր աշակերտները, որոնք եղել են նրա հիմնադրած «Միլլի գյորուշ» /«Ազգային տեսակետ»/ շարժման անդամներ: Էրբաքանի վարչապետության շրջանում վերջիններս ունեցել են քաղաքապետի և նախարարի պաշտոններ: 1974-ին, երբ Էրդոդանը ղեկավարում էր Էրբաքանի երիտասարդական կառույցը, հենց նրա ջանքերով և նրա մասնակցությամբ բեմականացվեց մի ներկայացում՝ «Մասկոմյա» վերնագրով, որը աքրոնիմն էր մասուն-կոմունիզմ-յահուդի (հրեա) եզրերի:

Հատկանշական է, որ 2003թ. նոյեմբերի 15-ին Ստամբուլում իրականացված երկու սինագոգների պայթյուններին երկրի իշխանությունները չարձագանքեցին: Ահաբեկչության պատասխանատվությունն իր վրա էր վերցրել թուրքական մի իսլամիստական կազմակերպություն, որի կողմից հրատարակվող «Այլըք» ամսագրում պարբերաբար տպագրվում են հակահրեական նյութեր: Թուրք պատմաբան, ծագումով հրեա Ռիֆաթ Բալին Ստամբուլի սինագոգների պայթյուններից հետո հանդես եկավ հրապարակայնորեն ու խոսեց իսլամական շարժմանը բնորոշ և Թուրքիայում առկա հակասեմիթիզմի մասին՝ նշելով, որ այդ շարժումից էր դուրս եկել նաև Էրդոդանը:

2006-ին Թուրքիայում էկրանավորվեց երկրում երբևէ նկարահանված ամենաթանկ ֆիլմերից մեկը՝ «Ալիքների հովիտը», որի մեջ ամերիկացի հրեա մի բժիշկ ամերիկացի զինվորների կողմից սպանված իրաքցիներից հանում էր օրգաններ՝ դրանք Իսրայելում վաճառելու նպատակով: Սպասվում էր, որ Էրդոդանը կքննադատի ֆիլմի սյուժեն, ինչը տեղի չունեցավ:

Հատկանշական է, որ Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության միջինարևելյան ուղղության մեջ տեղ գտան որոշակի փոփոխություններ: Թուրքիան ձգտում է բարելավել հարաբերություններն արաբական իսլամական աշխարհի հետ, ակտիվորեն մասնակցում է միջազգային իսլամական տարաբնույթ ֆորումների աշխատանքներին, Թուրքիայում են գտնվում իսլամական մի շարք կառույցների գրասենյակներ, Թուրքիան հայտարարում է իր պատկանելությունն իսլամական ազգին՝ ումմային, խոսում է համաիսլամական հիմնահարցերի և համատեղ ջանքերով դրանց հաղթահարման մասին: ԱԶԿ իշխանության գալուց հետո Թուրքիան քանիցս քննադատել է Իսրայելին՝ Պաղեստինում իրականացվող քաղաքականության համար: 2006թ.

ամռանը Լիբանանի դեմ Իսրայելի սկսած պատերազմի ժամանակ Թուրքիան նույնպես քննադատեց Իսրայելին:

Միննույն ժամանակ, Թուրքիան շահագրգռված է պահպանել գործընկերությունն Իսրայելի հետ, որի հետ 1996թ. կնքել է ռազմական համագործակցության պայմանագիր: Բացի այդ, Թուրքիան շահագրգռված է ջերմ հարաբերություններ ունենալ առանձին հրեական համայնքների, մասնավորապես՝ ԱՄՆ հրեական համայնքի հետ, որը կարևոր գործոն է ԱՄՆ-ում հայկական քարոզչությանը դիմագրավելու տեսանկյունից:

Այսպիսով, Թուրքիայում հակասեմիթիզմի տրամադրությունների ի հայտ գալու մեջ կարող են շահագրգռված լինել արտաքին ուժեր. հաճախ է խոսվում արաբական և իրանական առանձին շրջանակների հնարավոր դերակատարության մասին: Միննույն ժամանակ, Թուրքիայում հակասեմիթիզմը նկատի է առնում ոչ միայն հակազդեցությունը հրեաների, այլև, առհասարակ, ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի նկատմամբ: Հակասեմիթիզմի սաստկացումն իր հետ կարող է հանգեցնել էթնոդավանական փոքրամասնությունների նկատմամբ որոշակի անհանդուրժողականության դրսևորման:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ: КОМПРОМИСС ПО ЗАРАНЕЕ ЗАДАННОЙ МОДЕЛИ ТРУДНО ДОСТИЖИМ

В ноябре 2007г. эксперты действующей при содействии Евросоюза Международной кризисной группы в очередной раз заявили, что общества конфликтующих стран не готовы к компромиссам, а угроза возобновления военных действия в Нагорном Карабахе возрастает. Помимо прочего, демонстрацией этой оценки международное сообщество еще раз призналось в своем бессилии разрешить этот затянувшийся конфликт. Если учесть еще и другое обстоятельство, а именно, не совсем забытые заявления сопредседателей Минской группы ОБСЕ о том, что их «фантазия иссякла» и все, что можно было предложить, предложено, то можно прийти к не совсем убедительному мнению: конфликт на основе компромисса неразрешим. Соответственно, надо ожидать иного пути решения.

Отнюдь не случайно, что указанная международная экспертная структура все чаще аргументирует необходимость скорейшего решения карабахского конфликта всего лишь одним доводом: Азербайджан усиливает свою военную мощь, тем самым готовясь к военному решению конфликта. То есть, по сути дела, вся позиция этой структуры базируется на шантаже по отношению к Армении и Нагорному Карабаху. Возможно, этот довод, в некоторой степени, отражает всего лишь интересы европейского сообщества. Но возможно и то, что эксперты зациклись на этом доводе вследствие отсутствия у них иных аргументов для подчеркивания значимости своей концепции урегулирования.

Ուստի, ՀՀ իշխանությունները հայ-վրացական միջպետական հարաբերություններում կարող են օրակարգային դարձնել նաև Թբիլիսիի մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության հարցը: Թիֆլիսահայության իրավունքների պաշտպանության գործում ակտիվ դեր կարող են կատարել նաև Հայաստանի ՀԿ-ները, ինչպես նաև Վրաստանում գործող հայկական հասարակական կազմակերպությունները, որոնք, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, հնարավոր միջոցներով պետք է աջակցեն «փոքրիկ Հայաստանի» պահպանմանը:

Վահրամ Հովյան
«Նորավանք» հիմնադրամ

ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Գերմանիայում բնակվող թուրք գրող Քեմալ Յալչընի հարցազրույցը

Հայտնի է, որ նորագույն շրջանի թուրք գրականությունը գրեթե չի անդրադարձել Հայոց ցեղասպանության, իսլամացած հայերի թեմային, և միայն վերջին մի քանի տարիներին է, որ այդ ուղղությամբ որոշակի շարժ կա: Լույս են տեսել և ներկայումս էլ շարունակում են տպագրվել հիմնականում փաստագեղարվեստական բնույթ ունեցող գրքեր՝ նվիրված հիշյալ թեմաներին: Ակնհայտ է նաև, որ այդ ստեղծագործությունները շատ դեպքերում պարունակում են որոշակի քաղաքական և քարոզչական ենթատեքստեր:

Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընը առաջիններից է թուրք հեղինակներից, որ անդրադարձել է հայկական թեմատիկային, մասնավորապես, իսլամացած ու ծալտյալ հայերին: Հայերեն թարգմանությամբ լույս է տեսել նրա՝ «Քեզ հետ է ուրախանում սիրտս» փաստագեղարվեստական վեպը, որն արդեն թարգմանվել է մի քանի լեզուներով: Նշենք, որ այդ գրքից հետո Քեմալ Յալչընը հեղինակել է ևս երկու գիրք, որոնք ունեն նույնանման բովանդակություն և ուղղակի կամ անուղղակի վերաբերվում են Հայոց ցեղասպանությանն ու իսլամացած հայերին: Վերջերս գրողը հարցազրույց է տվել «Հանրապետական» ամսագրին, որը ներկայացնում ենք ստորև:

– Մեծարգո պարոն Յալչըն, հայ ընթերցողները «Քեզնով է ուրախանում սիրտս» գրքի շնորհիվ արդեն ծանոթ են Ձեզ: Հետաքրքիր է իմանալ, թե ինչու եք ընտրել հատկապես հայկական թեմատիկան:

– Շատ ընթերցողներ հարցնում են. «Դու հայկական ծագում ունես և դրա՞ համար ես արդյոք հայերին վերաբերվող գրքեր գրում»: Այսպիսի հարցերին միշտ նույն պատասխանն եմ տվել և այժմ Ձեր հարցին էլ եմ նույն պատասխանը տալիս: Ես թուրք ծնողների, սուննի մուսուլման ընտանիքի գավակ եմ: Ինչքան որ ես գիտեմ՝ իմ ազգ ու տակում հայ կամ էլ քրիստոնյա, գրիգորյան հավատքի ազգական չունեմ: Հայերի հետ պատահած մեծ աղետը, Անատոլիայի հույների ապրած աղետը, ցավն ուսումնասիրելու, պատմական ճշմարտություններն ի հայտ հանելու և գրելու համար բավական է լինել խղճի տեր մարդ: Ես նախ և առաջ որպես մարդ եմ ուսումնասիրել այս թեմաներն ու գրել, գրքեր հրատարակել:

Ես նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթությունս Թուրքիայում եմ ստացել: Թուրքական ազգային կրթության սկզբունքների համաձայն գրված պատմության դասագրքերն եմ կարդացել: Ոչ միջնակարգ դպրոցում և ոչ էլ բուհում հայերի, ասորիների, հույների և մյուս ոչ մուսուլման ժողովուրդների հետ պատահած աղետների մասին չեմ կարդացել: Պատմության դասերի ժամանակ մեզ ասվում էր. «Օսմանցիների հացը ուտող հայերը և հույները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությանը թիկունքից հարվածեցին, դավաճանեցին: Օսմանցիներն էլ՝ իրավացի լինելով, նրանց անհրաժեշտ պատասխանը տվեցին»: Ոչ միայն ոչ մուսուլման ժողովուրդների գոյության, այլև ավիների, քրդերի, քրդերի գոյության մասին անգամ կարգին չգիտեինք: Ես դպրոցներում ձևավորվել էի հետևյալ գաղափարով. «Թուրքը բացի թուրքից ուրիշ բարեկամ չունի»: Դպրոցական կյանքից, դասերից դուրս իմ կարդացած գրքերի շնորհիվ սկսեցի իմանալ ճշմարտությունները: Համալսարանական տարիներին և դրանից հետո չնայած հարում էի ձախակողմյան շարժումներին, սակայն այս հարցերով շատ չէի հետաքրքրվում: Մենք գոչում էինք. «Բոլոր երկրների բանվորներ և ճնշվող ժողովուրդներ, միացե՛ք», Վիետնամի, Հարավային Աֆրիկայի, Պաղեստինի, Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազատագրության համար գրում-կարդում էինք, սակայն օրինակ, Մտամբուլի Քումբափը թաղամասի ուսանողական հանրակացարանի (ուր երկու տարի մնացել եմ) անմիջապես կողքին ապրող հայերի գոյության մասին տեղյակ չէինք, համենայնդեպս՝ ես:

Երբ 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո եկա Գերմանիա, սկսեցի ազատվել այդ միակողմանի, սխալ գաղափարներից: Եվ այս հարցում ինձ վրա ամենամեծ ազդեցություն ունեցած մարդը Մելինե անունով թուրքերենի ուսուցչուհին էր, որի հետ ես ծանոթացա ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ: Հայազգի Մելինեն մեզ՝ թուրքերենի ուսուցիչներին, սովորեցնում էր Գերմանիայում թուրքերեն դասավանդելու առանձնահատկությունները: Դասընթացների ընթացքում իմ և Մելինեի միջև ջերմ բարեկամություն ձևավորվեց, ես սկսեցի հետաքրքրվել Մելինեի կյանքով, նրա անցյալով: Երբ ուսումնասիրում էի Մելինեի կյանքը, հասկացա, որ նրա ապրած ցավն իրականում հայերի ապրած ցավերի միայն մի կաթիլն է: «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստագրական վեպս 1994–2000թթ. ընթացքում իմ արած ուսումնասիրությունների արդյունքն է: Մինչ օրս այն թարգմանվել է ութ լեզվով: Ես կիսում եմ հայ ազգի ցավերը և դրանք համարում նաև իմը:

– Վերջին ժամանակներս ավելի շատ է քննարկվում Թուրքիայում ապրող ծպտյալ կամ իսլամացած հայերի խնդիրը: Ըստ Ձեզ՝ սա ինչի՞ հետ է կապված:

– Թուրքիայում վերջին 10-15 տարիներին սկսել են տաբուները քանդվել: Լույս տեսան և շարունակում են տպագրվել մեծ թվով հետազոտություններ, վեպեր, որոնք չեն արտահայտում պաշտոնական պատմագրության տեսակետները: Ինչքան շատ է քննարկվում ինքնության հարցը, այնքան ավելի շատ մարդ է սկսում ուսումնասիրել, փնտրել իր արմատները, ցեղը, ինքնությունը: Ֆեթհիյե Չեթինի նման մարդիկ իրենց ցեղի, ընտանիքի մասնավոր պատմությունը գրեցին, հրատարակեցին: Այս տիպի գրքերը գնալով ավելանում են: Սակայն պետական համապատասխան կառույցները հենց սկզբից ի վեր հետևել և հետևում են ծպտյալ հայերին, հավատափոխներին, իսլամացած հայերին, ասորիներին, հույներին: Վերջերս թերթերը գրել էին, որ 1980թ. հեղաշրջումից անմիջապես հետո զինվորական խունտայի ներկայացուցիչները մի հրաման էին արձակել, որը պահանջում էր հետևյալը. «Ձեր թաղամասի, շրջապատի հայերին, հույներին ուսումնասիրեք և հսկողության տակ վերցրեք»: Եվ Թուրքական պատմական ընկերության նախագահի հայտարարությունը, թե «իսլամացված, կրոնափոխված հայերի անունները, սովյալները անուն առ անուն, հայտնի են, և նրանց ցուցակը ձեռքումս է»՝ ոչ այլ ինչ է, քան պետության գաղտնի ծառայությունների երկար ժամանակ ի վեր կատարած աշխատանքի պաշտոնական բացահայտում: Այս հայտարարությունն իրականում սպառնալիք էր ծպտյալ կամ բացահայտ հայ քաղաքացիների նկատմամբ, որոնք ապրում են Թուրքիայում կամ էլ արտասահմանում:

– Ինչպես հայտնի է, Եվրոպայում էլ Թուրքիայից արտագաղթած ծպտյալ և իսլամացած հայեր կան: Նրանց մասին մանրամասն կարո՞ղ եք պատմել:

– Ճիշտ է, Եվրոպայում Թուրքիայից արտագաղթած իսլամացած հայեր կան, սակայն ես նրանց հստակ թիվը չգիտեմ: Այս հարցում Գերմանիայի հայ համայնքն ավելի մանրամասն սովյալներ կարող է տալ:

– Իսկ Եվրոպայում ծպտյալ հայերը շարունակո՞ւմ են իրենց ինքնությունը թաքցնել:

– Իմ հետազոտությունների ընթացքում շատ իսլամացած, ծպտյալ հայեր կամ էլ, այսպես կոչված, «մերոնք»,¹ որոնք ազգականներ, մերձավորներ ունեն Թուրքիայում, պատմել են, որ նույնիսկ Գերմանիայում նրանք ստիպված են եղել երկար ժամանակ իրենց ինքնությունը թաքցնել: Շատ հայեր դեռ վախենում են, որ Ստամբուլի, Անատոլիայի իրենց մերձավորի, եղբոր, ընտանիքի հետ կարող է փորձանք պատահել: Այս վախի պատճառով էլ նրանք լռում են, թաքցնում իրենց իրական ինքնությունը: Այս վախը ոչ միայն Եվրոպայում ապրող թուրքահայերի շրջանում է տարածված, այլև դեռ առկա է նույնիսկ հեռավոր Արգենտինայում ապրող որոշ թուրքահայերի շրջանում:

¹ «Մերոնք»-ը կամ թուրքերեն *bizimkiler*-ը այն անվանումն է, որով ծպտյալ հայերը կոչում են իրենք իրենց, և սա արվում է նաև անվտանգության նկատառումներից ելնելով (Ռ. Մ.):

– *Եվրոպայի ծպտյալ հայերն իրենց որպես հայ համարո՞ւմ են, կա՞ն արդյոք կրոնադարձության դեպքեր, ներքին ամուսնությունները դեռ պահպանվո՞ւմ են:*

– Ծպտյալ հայերի շրջանում, լինի Թուրքիայում թե Եվրոպայում, կան քրիստոնեության վերադարձողներ: Ես ճանաչում եմ մարդկանց, որոնք նույնիսկ 40 տարեկանից հետո կնքվել են: Ծպտյալ հայերի շրջանում ներկայումս էլ դեռևս գերակշիռ թիվ են կազմում ներքին ամուսնությունները:

– *Ինչպիսի՞ն են Եվրոպայի ծպտյալ հայերի հարաբերություններն այնտեղի մյուս հայերի հետ:*

– Ես նկատել եմ, որ Թուրքիայի հայերի և Հայաստանի հայերի միջև մտածելակերպի, քաղաքական հայացքների, դիրքորոշման և կենսաձևի տեսանկյունից որոշ տարբերություններ կան: Մակայն սրա չափերը, ընդգրկումը չեմ ուսումնասիրել և քննել: Ես կարծում եմ, որ այս հարցերում հայկական համայնքները, կուսակցությունները և կազմակերպություններն ավելի շատ տեղեկությունների են տիրապետում:

– *Թուրք որոշ գիտնականներ ծպտյալ և իսլամացած հայերին համարում են սպառնալիք Թուրքիայի համար: Այս մասին ի՞նչ եք մտածում:*

– Ես ընդհանրապես չեմ կարծում, թե բռնությամբ, վախով կրոնը փոխած, իրական ինքնությունը թաքցրած մարդիկ Թուրքիայի համար սպառնալիք են: Այն մարդը միայն, ով կարողանում է ազատորեն պահպանել իր ինքնությունը, կարող է իսկապես սիրել այն պետությունը, երկիրը, որտեղ նա ապրում է: Այն հասարակությունում, որտեղ խաղաղության մշակույթը կյանքի է կոչվել, կրոնական, լեզվական, մշակութային տարբերությունները վերածվում են հարստության աղբյուրի: Կարճ ասած՝ մի մրգով այգի չի լինում: Ես այս իրականությունը հասկացել եմ՝ ապրելով Գերմանիայում որպես թուրք փոքրամասնության ներկայացուցիչ: Եվրոպայում փոքրամասնություններին տրված և օրենքներով երաշխավորված իրավունքները Եվրամիությանն անդամակցել ցանկացող Թուրքիայում էլ կարող են կյանքի կոչվել: Ահա այդ ժամանակ Թուրքիան բոլորովին այլ Թուրքիա կարող է դառնալ:

– *Մտածո՞ւմ եք արդյոք այս թեմայով նոր գրքեր գրել:*

– Ես «Պահ տված օժիտը» փաստագրական վեպով 1998թ. ստացել եմ Աբդի Իփեքչիի անվան Բարեկամության և խաղաղության հատուկ մրցանակ, իսկ 1999թ.՝ Թուրքիա-Հունաստան Բարեկամության և խաղաղության մրցանակ: Այս մրցանակներն ինձ պարտավորեցնում են Թուրքիայում և աշխարհում խաղաղության ու բարեկամության զարգացման համար ավելի շատ աշխատել, ավելի շատ գրել:

Եվ վերջում ես շատ մեծ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ իմ մտքերն արտահայտելու հնարավորություն տալու համար: Օգտագործելով այս առիթը՝ սիրով և հարգանքով ողջունում եմ իմ հայ ընթերցողներին:

**Զրույցը վարեց
Ռուբեն Մելքոնյանը**

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՈՒՅՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Տարբեր գնահատականներով՝ մահմեդական հույների թիվը Թուրքիայում հասնում է մինչև 700 հազարի: Որպես կանոն, մահմեդականություն դավանող հույները բաժանվում են մի քանի խմբերի: Օսմանյան տիրապետության շրջանում քրիստոնյաների նկատմամբ Կրետե կղզում իրականացված բռնությունների, ճնշումների հետևանքով հազարավոր հույներ ստիպված եղան ընդունել մահմեդականություն՝ հետագայում ձուլվելով կղզի տեղափոխված թուրք բնակչության հետ: Իսլամացած հույների այս խմբին բնորոշ է թուրքական ինքնագիտակցությունը: Վերջիններս բնակվում են Թուրքիայի հարավային և հարավարևելյան՝ Այդրնի, Անթալիայի, Դենիզլիի, Մերսինի, Իսքենդերունի շրջաններում, ինչպես նաև Չանաքքալեում, Մանիսայում և Թեքիրդաղում: Կրետե կղզու իսլամացած հույները Թուրքիայում հաստատվել են 1908թ.: Նրանց թիվը հասնում է 300 հազարի: Այս խմբի ինքնանվանումն է *Girit Muslimanlari*: Կրետե կղզուց տեղափոխված իսլամացած հույների մի զգալի մաս ապրում է Թուրքիայի կողմից գավթված, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսում», ուր նրանք գրեթե ձուլվել են տեղացի թուրքերին¹:

Թուրքիայում մահմեդական հույները բնակվում են նաև Սև ծովի առափնյա շրջաններում՝ Սամսունից մինչև Ռիզե: Իսլամացած հույներով առավել հոծ բնակեցված է, այսպես կոչված, «Սև գետի» ավազանը, ուր համատարած կրոնափոխությունը պոնտոսցի հույների և համշենահայերի շրջանում սկսել է Ղուռուֆոլլի Մեհմեդը, որը ենիչերիների խմբերով մի քանի անգամ ներխուժել է Սև գետ, որտեղ 10 տարի մահմեդականություն է քարոզել: Ընդունված է համարել, որ պոնտոսցի հույները դավանափոխվել սկսել են 16-րդ դարի կեսերին, սակայն կրոնական ճնշումներն ուժեղացել են հատկապես 18-րդ դարում, ինչի հետևանքով բազմաթիվ հունական բնակավայրեր ամբողջությամբ մահմեդականացվել են:

Հունական ծագում ունեցող թուրք լրագրող, հրապարակախոս Օմեր Ասանի գնահատականներով՝ իսլամացած պոնտոսցի հույների թիվը Թուրքիայում այսօր հասնում է 300 հազարի, այլ գնահատականներով՝ շուրջ 500 հազարի: Ըստ մի շարք հեղինակների՝ Բալթաչի և Սոլաքլի գետերի ավազանում այժմ էլ աղավաղված հունարենով խոսող բազմաթիվ գյուղեր կան: Հասան Ումուրը, որը ևս զբաղվում է իսլամացած հույների խնդրով, նշում է, որ Տրապիզոն քաղաքի բնակչությունն այսօր էլ հիմնականում թրքախոս հույներից է բաղկացած: 1977թ. հրատարակված մի տեղեկագրում նշվում է, որ իսլամացած հույները կազմում են Տրապիզոն քաղաքի բնակչության 70%-ը: 1987թ. հրատարակված մեկ այլ տեղեկագրում նշվում է, որ մահմեդականություն դավանող հույները կենտրոնացած են Տրապիզոն, Սամսուն, Օրդու, Գիրեսուն, Ռիզե, Ֆաթսա, Ունիե քաղաքներում, ինչպես նաև՝ Տոնիայի, Սյուրմենեի, Չայքարիի, Ուզունգյուլի և Շերիխոյի շրջաններում: Մահմեդականացված պոնտոսցի հույները գերակշռում են նաև Մաճկայում, Թորոլում, Յաղըլդերեում, Սանտայում, Կրոմնիում և Օֆի շրջանում: Օֆի շրջանում ապրող պոնտոսցի հույները տարբերվում են իրենց ազգակիցներից առավել մոլեռանդ մահմեդականներ լինելով:

¹ Իսլամացած հույների մեկ այլ խումբ, որը ևս արտագաղթել է Կրետե կղզուց, բնակվում է Լիբանանում և Սիրիայում: Հույների այս խումբը ժամանակին դիմում է սուլթան Աբդուլ Համիդին իրենց Լևանտի շրջանում բնակեցնելու խնդրանքով: Սուլթանն ընդունում է վերաբնակեցման ծրագիրը, և 1896թ. Սիրիայում հիմնադրվում է առաջին բնակավայրը, որն ի պատիվ սուլթանի կոչվում է Համիդիե: Այն այժմ ունի 3000-ից ավելի բնակչություն, որի 60%-ը կազմում են Կրետեի իսլամացած հույները: Վերջիններս բնակվում են նաև Լիբանանի հյուսիսում գտնվող Տրիպոլի քաղաքում, ուր նրանց թիվը, ըստ տարբեր տեղեկությունների, հասնում է 8000-ի: Հետաքրքրական է, որ Սիրիայում և Լիբանանում բնակվող հույն մահմեդականներն ընտանիքներ ձևավորում են իրենց համայնքի շրջանակներում և, ի տարբերություն Կրետե կղզուց Թուրքիայի տարբեր շրջաններ տեղափոխված մյուս հայրենակիցների, պահպանել են հունարեն լեզուն ու սովորույթները:

Ինչ վերաբերում է իսլամացած հույների մյուս խմբերին, ապա Թուրքիայի կենտրոնական շրջաններում ևս գոյություն ունեն համայնքներ, որոնք, սակայն, գրեթե ձուլվել են թուրքերին: Այդպիսի համայնքներ նախկինում կային Կեսարիայի, Մալաթիայի, Մեքաստիայի, Ամասիայի, Կոնիայի շրջաններում: Քահրամանի շրջանի գերակշիռ մասը կազմում են, այսպես կոչված, Քահրամանլիդ-հույները, որոնք բաժանվում են երկու խմբի: Առաջինը դավանում է քրիստոնեություն, թեև ամբողջությամբ թրքախոս է և դեռևս 1920-ականներին արտագաղթել է Թուրքիայից՝ հաստատվելով Հունաստանի տարբեր շրջաններում: Քահրամանլիդների մյուս խումբն իսլամացվեց օսմանյան տիրապետության շրջանում՝ գրեթե ամբողջությամբ ձուլվելով թուրքերին և յուրյութներին:

Բացի վերոնշյալ խմբերից, մահմեդական հույներ են ապրում նաև Թուրքիայի այլ շրջաններում, որոնք, սակայն, մեծաթիվ չեն և գրեթե ձուլված են: Մինչ այժմ Թուրքիայի որոշ քաղաքներում, օրինակ՝ Անկարայում, Բուրսայում, Աֆյոնում, գոյություն ունեն թաղամասեր, որոնց բնակիչները, ըստ տեղացիների, նախկինում քրիստոնյաներ էին՝ առավելապես հույներ և հայեր: Հույն լրագրողներն իսլամացած հույներով բնակեցված շրջաններ են նշում նաև Անտիոքում՝ Իսքենդերունի, Մամանդաղի և Ալթնգյուի հատվածներում:

Շատ հետազոտողներ մահմեդականացված հույներին վերաբերող իրենց ուսումնասիրություններում նշում են այն մասին, որ դեռևս Բյուզանդական կայսրության օրոք թուրք-հունական և հակառակը՝ հույն-թուրքական միաձուլման գործընթացները զարգացել են բավական ակտիվ, ինչի արդյունքում արդեն Բյուզանդիայի անկումից հետո նախկին կայսրության տարածքում բնակվում էին հունադավան թուրքական ցեղեր, ինչպես նաև մահմեդականություն ընդունած հույներ:

Իսկ սևծովյան շրջանում հաստատված թուրքմենական Չեփնի ցեղը մեծ դեր խաղաց տեղի հույների ինքնագիտակցության փոփոխման հարցում: Այսօր էլ Տրապիզոնի հույների մի մասը տարբերվում է շրջանի իսլամացած հույների այլ խմբերից՝ Չեփնի թուրքմենների հետ ավելի սերտ հարաբերությունների մեջ գտնվելով: Շատ ուսումնասիրողներ նշում են իսլամացած հույների խիստ ծայրահեղական վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ, չնայած այն հանգամանքին, որ իրենք էլ դեռևս 2-3 դար առաջ դավանել են քրիստոնեություն: Օրինակ՝ Մարաշլին Օֆի շրջանի այն կրոնական մուլեռանդ գյուղերից է, որտեղ իսլամի ուսուցումը սկսել է դասավանդվել տեղի մահմեդական հույների կողմից դեռևս 1737թ.:

Թուրքիայում բնակվող իսլամացած հույների մեծամասնությունը խոսում է աղավաղված թուրքերենով: Կրետե կղզու հունարենով այժմ խոսում են միայն տարեցները, այն էլ ոչ բոլոր շրջաններում: Պոնտոսցի հույների մի մասը խոսում է բացառապես թուրքերեն, իսկ մյուս մասը՝ հունարեն: Օրինակ՝ Չայքարիի և Օֆի գյուղերի բնակիչներն անգամ աղոթասեղերում գործածում են հունարենը: Սակայն հույների այս խումբն իրեն խիստ առանձնացնում է մնացյալ հույներից՝ իր խումբը կոչելով «թուրքոս» և լեզուն՝ «ռոմաիկա», իսկ հույներին՝ առհասարակ «օրոմենոս»:

Թուրքիայում բնակվող իսլամացած հույներն ակտիվացման նշաններ ցույց տվեցին անցյալ դարի 90-ականների սկզբին, երբ շատ երիտասարդներ փնտրելով իրենց արմատները՝ փորձում էին հաստատվել Հունաստանում, սակայն այդ գործընթացը զանգվածային բնույթ չկրեց: Արդյունքում՝ ազգային ինքնագիտակցության վերածնունդը գրեթե մարեց: Միայն վերջին շրջանում հունական ծագում ունեցող որոշ թուրք գիտնականներ, պատմաբաններ, լրագրողներ սկսել են խոսել մահմեդականացված հույների մասին՝ խնդրի վերաբերյալ հետաքրքրություն առաջացնելով թուրքական հասարակության շրջանում:

Արման Հակոբյան

ՀԱՅ ԵՎ ՀՐԵԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Խորհրդային վարչակարգի փլուզումից հետո և նոր դարաշրջանի նախամուտով, կապված համաշխարհային աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական արագընթաց վերափոխումների հետ, հայ և հրեա համայնքների միջև խորքային քաղաքական-գաղափարական հակասությունների հարթեցման հնարավոր հեռանկարներ են նկատվում: Երկկողմ երկխոսության զարգացման համար կարևոր են եղել Իսրայել-հրեական համայնքներ փոխհարաբերություններում շոշափելի փոփոխությունները, այդ համայնքների ներսում գոյացած սոցիալ-տնտեսական, քաղաքական ու գաղափարական տեղաշարժերը, ինչպես նաև խորհրդային կարգերի վերացմամբ նորանկախ Հայաստանի հռչակումը, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռազմավարության հստակեցումը: Հայ և հրեա համայնքների միջև երկխոսության հաստատումը լուրջ ներդրում կլինի Հայաստան-Իսրայել միջպետական, դիվանագիտական հարաբերությունների ձևավորման, երկու ազգերի միջև բազմակողմանի կապերի ընդլայնման համար: Համաշխարհային հրեականության հետ հայ սփյուռքի համագործակցության զարգացումը, հաշվի առնելով նրա զգալի դերն ու հեղինակությունը միջազգային հարաբերություններում, մեծ նշանակություն կունենա Հայաստանի, համայն հայության համար այնպիսի կարևորագույն հիմնախնդիրների կարգավորման գործընթացներում, ինչպիսիք են 1915թ. հայերի դեմ իրագործված ցեղասպանության միջազգային ճանաչումը, հայ-թուրքական համալիր հարաբերությունների, Ղարաբաղյան հիմնախնդրի և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը և այլն:

Տեղաշարժեր հրեական համայնքներում

Վերջին 15 տարիների ընթացքում հրեական համայնքների ներսում տեղի են ունենում նոր տեղաշարժեր: Դրանք ունեն ինչպես սոցիալ-տնտեսական, քաղաքական, այնպես էլ գաղափարական շարժառիթներ: Մասնավորապես, վերջին 10 տարիների կտրվածքով, ի հաշիվ հիմնականում Միացյալ Նահանգների, Կանադայի, Արևմտյան Եվրոպայի հրեական համայնքների և հենց Իսրայելի հրեա բնակչության, ընթանում է համաշխարհային հրեականության մի զգալի հատվածի տնտեսական, քաղաքական ու գաղափարական կապիտալի (ռեսուրսների) կենտրոնացում Արևելյան, Հարավարևելյան Ասիայում: Դա է վկայում վերջին ժամանակներս ասիական մայրցամաքի տարբեր հատվածներում հրեական խոշորագույն նոր կազմակերպությունների, կենտրոնների հիմնադրման իրողությունը: Հարցի կապակցությամբ, սակայն, հարկ է հստակեցնել մեկ կարևոր առանձնահատկություն. համաշխարհային հրեականության այն ստվար հատվածը, որ մտադիր է իր ապագան կապել ասիական մայրցամաքի հետ, մեծ հեռանկարներ է տեսնում առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության հետ այդ համայնքների համագործակցության խորացման գործում: Ինչպես հաստատում են արևմտյան, և ոչ միայն արևմտյան, լրատվամիջոցներն ու փորձագիտական հանրությունները, Ռուսաստանը պոտենցիալ ռեսուրսներ ունի առաջիկա տարիներին վերածվելու Իսրայելի սահմաններից դուրս համաշխարհային հրեականության խոշորագույն կենտրոններից մեկի: Պատահական չէ, որ վերջին շրջանում արագ քայլեր ձեռնարկվեցին Ռուսաստանի Դաշնությունում հրեական հոգևոր և աշխարհիկ խոշոր կենտրոնների հիմնադրման, համաշխարհային հրեական կազմակերպությունների ներկայացուցչությունների բացման ուղղությամբ: Այսպես, 1993թ. փետրվարին ռուսաստանյան հրեական հոգևոր համայնքների միավորման ու կենսագործունեության պայմանների բարելավման նպատակներով հիմնադրվեց Ռուսաստանի հրեական կրոնական համայնքների ու կազմակերպությունների կոնգրեսը (ՌՀԿՀԿԿ): Ներկայումս այն միավորում է ՌԴ տարբեր քաղաքների 33 հրեական համայնքներ: Կազմա-

կերպությունը չունի վարչական իշխանություն, այլ իրականացնում է գուտ խորհրդատվական-կոորդինացիոն, ինչպես նաև ներկայացուցչական գործառնություններ: ՌՀԿՀԿԿ-ն հիմնականում զբաղվում է տարածաշրջանային գիտաժողովների կազմակերպման, հրեական համայնքներում գործունեություն ծավալելու նպատակով կադրերի վերապատրաստման և այլ աշխատանքներով: Կոնգրեսը ղեկավարում է Ռուսաստանի հրեաների գլխավոր ռաբբին (Ադոլֆ Շաևիչ): 1996թ. հրեա խոշոր գործարարների, հրեական համաշխարհային կազմակերպությունների ղեկավարության և հայտնի հոգևոր հրեա գործիչների նախաձեռնությամբ ու աջակցությամբ Ռուսաստանի Դաշնությունում հրեական համայնքների սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքի ակտիվացման նպատակներով հիմնադրվեց Ռուսաստանի հրեական կոնգրեսը (ՌՀԿ): Այս կառույցը կարճ ժամանակամիջոցում կարողացավ իր շուրջը միավորել Ռուսաստանում նախորդ դարի 90-ականներին գործող և, միևնույն ժամանակ, միմյանցից անկախ ու անտեղյակ բազմաթիվ հրեական կենտրոններ ու կազմակերպություններ, որոնք ներկայացնում էին ռուսաստանյան հրեական համայնքների հոգևոր, մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական շերտերը¹:

1998թ. նոյեմբերին հետխորհրդային տարածքում բնակվող հրեա հոգևոր և աշխարհիկ համայնքների առաջնորդների աջակցությամբ հիմնադրվեց ԱՊՀ հրեական համայնքների դաշնությունը, որի առաքելությունը հետխորհրդային նորանկախ հանրապետություններում գործող հրեաների ու հրեական համայնքների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային գործունակության զարգացումն ու այդ համայնքների միջև կապերի ամրապնդումն էր: ԱՊՀ հրեական համայնքների դաշնությունը ֆինանսավորում են ինչպես տարբեր հասարակական կազմակերպություններ (օր. Խաբադ-Լյուբավիչ շարժումը, «Ջոյնթը», Բոստոնի հրեական բարեգործություն կազմակերպությունը), անհատ գործարարներ ու մասնավոր հիմնադրամներ (Լազար և Պերլա Ժիլսինսկիները/Ֆլորիդա, Նյուտոնի և Ռոշել Բեկերի հիմնադրամը), այնպես էլ պետական կառույցներ (Իսրայելի կրթության և կրոնի հարցերով նախարարությունները): Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Մոսկվայում, ներկայացուցչություն ունի նաև Միացյալ Նահանգներում:

ԱՊՀ հրեական համայնքների դաշնության ստեղծումից կարճ ժամանակ անց՝ 1999թ., Ռուսաստանում սկսեց գործել Ռուսաստանի հրեական համայնքների դաշնությունը (ՌՀՀԴ), որը համառուսաստանյան հրեական կամավոր կրոնական կազմակերպությունների միություն է: Այն ներառում է ՌԴ-ում մշտական հիմունքներով բնակվող և հուդայական կրոնի հետևորդ քաղաքացիներին: Կազմակերպության հիմնական նպատակն է Ռուսաստանի հրեաների կրոնական, ազգային-մշակութային կյանքի բարելավմանն անհրաժեշտ պայմանների ստեղծումը: ՌՀՀԴ-ն կարևորում է նաև ԱՊՀ տարածքում և այլ տարածաշրջաններում բնակվող հրեական կրոնական կազմակերպությունների հետ կապերի զարգացումը:

Գործունեության առավել լայն շրջանակներ է ընդգրկում, մասնավորապես, Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող ռուսալեզու հրեաների համախմբման նպատակով 2002թ. հիմնադրված Ռուսալեզու հրեականության համաշխարհային կոնգրեսը (ՌՀՀԿ): Այն միավորեց ռուսալեզու հրեական համայնքներին, որոնք ընդհանուր առմամբ ներկայացնում էին շուրջ 27 երկիր (Իսրայել, Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, ԱՊՀ և Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջաններ): Կազմակերպության ղեկավարության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են հետխորհրդային տարածքում բնակվող հրեական համայնքների միավորման ու նրանց սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի բարելավման խնդիրները: ՌՀՀԿ պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ ներկայումս աշխարհում բնակվում է ավելի քան 3 մլն ռուսալեզու հրեա՝ ողջ հրեա բնակչության շուրջ 25%-ը: Նշենք նաև, որ ս.թ. նոյեմբերի 5-ին Մոսկվայում կայացած ՌՀՀԿ մայրցամաքային ներկայացուցչությունների խորհրդի նիստում կոնգրեսի նախագահի պաշտոնում ռուսաստանյան ներկայացուցչի՝ Բորիս Շպիգելի ընտրությունը, ինչպես նկատում է վերլուծաբանների զգալի մասը, նոր լիցք

¹ Ռուսաստանի հրեական կոնգրեսի առաջին նախագահը եղել է Վլադիմիր Գուսինսկին (1996-2001թթ.), որին հաջորդել են Լեոնիդ Նևզիլը (2001), Եվգենի Սատանովսկին (2001-2004թթ.) և Վլադիմիր Մլուցկերը (2004-2005թթ.): 2005թ. նոյեմբերի 10-ին ՌՀԿ նախագահ է ընտրվել ռուսաստանյան հայտնի գործարար Վյաչեսլավ Կանտորը:

կհաղորդի Ռուսաստանի հետ ռուսալեզու հրեական համայնքների կապերի ամրապնդմանն ու խորացմանը, կնպաստի Ռուսաստանի և Իսրայելի միջև համագործակցության ընդլայնմանը: Ի դեպ, վերջերս Միացյալ Նահանգներում ստեղծվեց ՌՀՀԿ Ամերիկյան ֆորումը, որը լուրջ գործունեություն է ծավալում ռուսալեզու հրեական համայնքների շահերի պաշտպանության ուղղությամբ՝ միավորելով տեղի շուրջ 87 ռուսալեզու հրեական կազմակերպություններին: Կոնգրեսը լուրջ աշխատանքներ է իրականացնում նաև Գերմանիայի հրեա բնակչության շահերի պաշտպանության հարցերում՝ սերտորեն համագործակցելով Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի հետ, որի ղեկավարն ունի պետնախարարի կարգավիճակ¹:

Ռուսաստանի Դաշնությունում գործող հրեական հոգևոր կամ աշխարհիկ կենտրոնների ցուցակը չի սահմանափակվում վերը շարադրված կազմակերպություններով, սակայն սույն վերլուծությունում խնդիրը դրանք պարզապես ներկայացնելը չէ: Առավել կարևոր են այն հիմնական դրոշմապատճառներն ու միտումները, որոնք հիմք հանդիսացան վերջին 15 տարիներին Ռուսաստանում հրեական քաղաքական-տնտեսական, գաղափարական կապիտալի կենտրոնացման համար: Դրանք են՝

- խորհրդային կարգերի փլուզումը և Ռուսաստանի Դաշնության հռչակումը, որի արդյունքում նոր հորիզոններ բացվեցին Ռուսաստանում և հետխորհրդային տարածքում հրեական համայնքների ազգային, հոգևոր-մշակութային կյանքի բարելավման ուղղությամբ,
- Ռուսաստանում հրեական համայնքների ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը,
- ԽՍՀՄ փլուզումից հետո և հատկապես վերջին կես տասնամյակում Ռուսաստանի տնտեսական աճի բարձր տեմպերը և երկրի քաղաքական կայունությունը, ինչը կարևոր երաշխիք է ՌԴ-ում հրեական տնտեսական կապիտալի ակտիվացման գործում,
- ԱՄՆ արտաքին քաղաքականության փոփոխությունները Մերձավոր Արևելքում (նավթազագային գործոն, ԱՄՆ-արաբական աշխարհ, ԱՄՆ-Իսրայել հարաբերությունները, ահաբեկչության դեմ պայքար և այլն), որոնք դանդաղ, սակայն զգալի բացասական ազդեցություն են թողնում տեղի հրեա բնակչության տնտեսական, քաղաքական կապիտալի պահպանման վրա (նկատի առնելով նաև վերջինիս ապահովագրության երաշխիքի հարցը),
- ըստ որոշ մասնագետների, Միացյալ Նահանգների ներքին քաղաքականությունը, փոխկապակցված արտաքին մարտահրավերների հետ, ինչպես նաև ամերիկյան հասարակությունում ընթացող խորքային սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որոնք նույնպես դրական հեռանկարներ չեն կանխատեսում տեղի հրեաների բարեկեցության ապահովման համար,
- ԱՄՆ հանրապետական վարչակարգի տարիներին Միացյալ Նահանգների տնտեսությունում, ինչպես հաստատում են բազմաթիվ մասնագետներ, նկատվող հրեական ֆինանսական կապիտալի ազդեցության ու դերի աստիճանական նվազումը,
- որոշ տվյալների համաձայն՝ պաղեստինա-իսրայելյան հիմնախնդրի չկարգավորվածության, ժամանակ առ ժամանակ ընթացող ռազմական բախումների, ահաբեկչությունների հետևանքով Իսրայելի բնակչության մի մասը և հատկապես խորհրդային հայրենադարձները, անվտանգ ու բարեկեցիկ կենսապայմանների ակնկալիքով, գերադասում են արտագաղթել Ռուսաստան,
- Իսրայելում խորհրդային և հետխորհրդային հայրենադարձների մի մասը շարունակում է կապեր պահպանել ռուսաստանյան ազգականների հետ և դեռևս կրում է ՌԴ քաղաքացիություն,

¹ Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհուրդը ստեղծվել է 1950թ. Ֆրանկֆուրտում: Հետագայում խորհուրդը տեղակայվում էր Դյուսելդորֆում, այնուհետև Բոննում: 1999թ. ապրիլի 1-ից Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի վարչությունը Բեռլինում է: Գերմանիայի հրեաների կենտրոնական խորհրդի կազմում ներառվում են 23 տարածքային միություններ, որոնք միավորում են 102 հրեական համայնքներ՝ ընդհանուր առմամբ 105 հազ. բնակչությամբ: Խորհուրդը համախմբում է ուղղափառ, ռեֆորմիստական, լիբերալ ու պահպանողական ուղղության հետևորդներին և ներկայանում է որպես Գերմանիայի հրեա բնակչության կրոնական շահերի ներկայացուցիչ:

- Ռուսաստանում և ԱՊՀ տարածքում հրեական համայնքների զարգացման հարցում շահագրգռված է նաև Իսրայելի պետությունը՝ ԱՄՆ հրեականությանն այլընտրանքային հրեական կենտրոնների ձևավորման, աշխարհաքաղաքական նոր վերափոխումների համարժեք արձագանքման նպատակներով (օր.՝ Չինաստանի գործոնը),
- Եվրոպայում և, մասնավորապես, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում ու Բելգիայում հակահրեականության միտումների ուժեղացմամբ տեղի հրեաների մեծ մասը գերադասում է տեղափոխվել հիմնականում ԱՄՆ, Կանադա, Ռուսաստան և Իսրայել¹:

Այն, որ Ռուսաստանը պոտենցիալ հնարավորություններ ունի դառնալ համաշխարհային հրեականության խոշորագույն կենտրոններից մեկը, հաստատում են նաև հրեական խոշոր կազմակերպությունների ներսում վերջին զարգացումներն ու իրադարձությունները: Նշենք, որ 1986թ. հիմնադրված Եվրոպական հրեական կոնգրեսի (ԵՀԿ) նախագահի պաշտոնում ս.թ. հունիսին Կոնգրեսի պատմության մեջ առաջին անգամ ընտրվեց ռուսաստանյան ներկայացուցիչ, Ռուսաստանի հրեական կոնգրեսի նախագահ Վյաչեսլավ Կանտորը՝ թե՛ մրցակցության արդյունքում հաղթանակ տանելով Կոնգրեսի նախկին նախագահ, ազգությամբ ֆրանսիացի Պիեր Բեննայնուի նկատմամբ: ԵՀԿ նախագահի պաշտոնում ռուսաստանյան ներկայացուցիչ առաջադրումը և հաղթանակը խորհրդանշում են երեք իրողություն: Նախ այն, որ վերջին ժամանակներս համաշխարհային հրեականությունը սկսել է էլ ավելի կարևորել Ռուսաստանի դերն ու նշանակությունը հրեական համայնքների զարգացման հեռանկարների առումով: Երկրորդ՝ Ռուսաստանը, պայմանավորված երկրի տնտեսական աճի բարձր տեմպերով ու քաղաքական կայունությամբ, բարեկեցիկ կենսապայմաններ է խոստանում տարբեր աշխարհամասերից ու երկրներից դեպի Ռուսաստան հրեաների արտագաղթի համար: Եվ երրորդ՝ Ռուսաստանը պոտենցիալ հնարավորություններ է ձեռք բերում մեծացնելու դերակատարումը եվրոպական հրեական համայնքային կյանքում և դառնալու նրանց առաջատարը²: Նշենք, որ ԵՀԿ-ն, որի գլխավոր գրասենյակը Փարիզում է, միավորում է Եվրոպայի շուրջ 42 հրեական համայնքներ ընդհանուր առմամբ 2.5 մլն բնակչությամբ³:

Նշենք նաև, որ նախքան ԵՀԿ նախագահի պաշտոնը ստանձնելը՝ 2006թ. փետրվարին, Վ.Կանտորի նախաձեռնությամբ ու նախագահությամբ հիմնադրվեց Եվրոպական հրեական հիմնադրամը (ԵՀՀ)՝ Եվրոպայում հրեական համայնքների կենսապայմանների բարելավման, հակասեմականության վերացման ու հրեական ազգային-մշակութային ինքնագիտակցության բարձրացման, հրեականության առջև կանգնած միջազգային սպառնալիքների (ահաբեկչություն, միջուկային զենքի տարածում) դեմ պայքարի նպատակներով: Ի դեպ, Վ.Կանտորը 2002թ. նշանակվել էր նոր ստեղծված, սակայն արդեն միջազգային բարձր հեղինակություն ունեցող Եվրասիական հրեական կոնգրեսի փոխնախագահ՝ Հարավարևելյան Ասիայի երկրների ու Չինաստանի, ինչպես նաև Ռուսաստանի հետ մշակութային և այլ փոխհարաբերությունների կոորդինացման հարցերով:

Եվս մեկ կարևոր ցուցիչ. 2005թ. Լեհաստանում կայացած «Կյանք իմ ժողովրդին» (*Let my people live!*) առաջին միջազգային ֆորումում Իսրայելի, Լեհաստանի և Ռուսաստանի ղեկավար ներկայացուցիչները հանդես եկան Հոլոքոստի հիշողության համաշխարհային ֆորում հիմնադրամի ստեղծման մասին հայտարարությամբ: Հիմնադրամի հոշակագրի համաձայն՝ նորաստեղծ կառույցն իր առջև դնում է երկու հիմնական առաքելություն՝ Հոլոքոստի հիշողության կանոնավոր միջազգային ֆորումների կազմակերպում և «Յադ-Վաշեմ» Հոլոքոստի հիշողության ուսուցման միջազգային դպրոցի ու Եվրոպական հրեական կոնգրեսի համատեղ

¹ Եվրոպայի հրեաների միայն փոքր մասն է ցանկանում վերադառնալ Իսրայել՝ կապված երկրի ու մերձավորարևելյան ռազմաքաղաքական անկայունության հետ:

² Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ վերջերս էապես վատթարացել է եվրոպական հրեաների վիճակը (հակասեմականության ուժեղացում):

³ ԵՀԿ-ն ներկայացուցչություններ ունի նաև Բելոխում, Բրյուսելում, Բուդապեշտում և Ստրասբուրգում: ԵՀԿ-ն համագործակցում է եվրոպական տարբեր երկրների կառավարությունների, եվրոպական առաջատար միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրամիությունը, Եվրոպայի խորհուրդը, ԵԱՀԿ-ն:

նախաձեռնությանը պատկանող Հոլոքոստի հիշողության եվրոպական կրթական ծրագրի իրագործում: Հիմնադրամը, որի հիմնադիրը կրկին Վ.Կանտորն է, ներկայացուցչություններ ունի Մոսկվայում, Ժնևում և Երուսաղեմում¹:

Ռուսաստանի հայությունը. համագործակցության հեռանկարներ

Վերջին տարիներին ասիական մայցամաքում և առաջին հերթին Ռուսաստանում ու ԱՊՀ տարածքում հրեական համայնքների ակտիվացման միտումներին գրեթե զուգահեռ նոր տրասնֆորմացիոն գործընթացներ են տեղի ունենում նաև Հայաստան-հայկական համայնքներ հարաբերություններում ու Ռուսաստանի հայության ներհամայնքային կյանքում: Անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի սահմաններից դուրս հայկական սփյուռքի հասարակական-քաղաքական, սոցիալական ու մշակութային կյանքում Ռուսաստանի հայության դերի մեծացման միտումներին, որի համար կարելի է առանձնացնել մի քանի հիմնական նախադրյալներ.

- Հայաստանի Հանրապետությունից, գերազանցապես սոցիալական դրդապատճառներով, աշխատուժի զանգվածային կանոնավոր արտահոսք դեպի Ռուսաստանի Դաշնություն,
- հայ-ռուսական քաղաքական, տնտեսական բարիդրացիական հարաբերությունները և ամենակարևորը՝ երկու ժողովուրդների միջև հոգևոր-մշակութային ընդհանրությունները (ի տարբերություն ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի),
- ԱՊՀ տարածքում բնակվող, այդ թվում և Վրաստանի հայության, ջավախահայության, աբխազահայության, ինչպես նաև ԼՂՀ մի ստվար հատված իր սոցիալ-տնտեսական բարեկեցության ապահովումը տեսնում է նախևառաջ Ռուսաստանում, ոմանք էլ գերադասում են հայրենադարձվել հայրենիք,
- հատկապես վերջին տարիներին Ռուսաստանի հայությունը ներկայանում է ոչ թե որպես սոցիալականացված մի կառույց, ինչպես նախկինում էր, այլ ձեռք է բերել համայնքային կազմակերպվածության բավական բարձր մակարդակ:

Վերջին շրջանում Ռուսաստանի հայության համայնքային կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձություններից առաջին հերթին պետք է նշել 2000թ. ռուսաստանյան խոշոր հայ գործարար Արա Աբրահամյանի նախագահությամբ Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) որպես համառուսաստանյան հասարակական կազմակերպության, ձևավորումը: Առավել կարևոր և, մինչույն ժամանակ, խորհրդանշական առաքելություն պետք է վերապահել 2003թ. հոկտեմբերին, կրկին վերջինիս ղեկավարությամբ, միջազգային կարգավիճակ ունեցող Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) հիմնադրումը: Ռուսաստանի հայերի միության ղեկավարության նախաձեռնությամբ Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադրումը Մոսկվայում հաստատում է այն տեսակետը, որի համաձայն՝ Ռուսաստանի հայությունն այսօր լուրջ հայտ է ներկայացնում դառնալու Հայաստանի սահմաններից դուրս համայն հայության խոշոր կենտրոններից մեկը, իսկ հեռանկարում, դատելով նորաստեղծ կազմակերպության խորագրից, հայության խոշոր ներկայացուցիչ մարմինը²: ՀՀԿ օրակարգում է հայկական համայնքներ ունեցող տարբեր երկրներում և առաջին հերթին Միացյալ Նահանգներում Կոնգրեսի ներկայացուցչությունների բացման հարցը³: ՀՀԿ-ն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական, առողջապահական ու կրթական ոլորտներում, ակտիվացրել է մասնակցությունը 1915թ. հայերի դեմ իրագործված ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Կոնգրեսն իր առջև խնդիր է դրել նաև ակտիվ մասնակցություն ունենալ և աջակցել Արևմտյան Հայաստանի հայության հետնորդների Երրորդ

¹ Վ.Կանտորի նախաձեռնությունն է նաև 2006թ. Թեյ Ավիվի համալսարանում Եվրոպական հրեական մշակութային հետազոտությունների կենտրոնի հիմնադրումը:

² Թեև Համաշխարհային հայկական կոնգրեսի գլխավոր գրասենյակը Երևանում է, կազմակերպության հիմնադիր նիստը տեղի է ունեցել Մոսկվայում:

³ Թեև ԱՄՆ-ում ՀՀԿ ներկայացուցչության բացման հարցը բացասական արձագանք է ստացել ամերիկահայության շրջանում, սակայն ՀՀԿ ղեկավարությունը շարունակում է բանակցություններ ու հանդիպումներ կազմակերպել ամերիկահայ համայնքի ղեկավարների հետ:

համագումարի կազմակերպմանն ու անցկացմանը՝ արևմտահայերի լիազոր ներկայացուցչական մարմինների ստեղծման նպատակով: Վերջին ժամանակներս Ռուսաստանի հայ համայնքում (շուրջ 2.5 մլն բնակչություն) տեղի ունեցած այս և այլ արմատական տեղաշարժերը վկայում են, որ վերջինս մոտ ապագայում առավել համակարգային գործունեություն ծավալելու, միջազգային հարաբերություններում իր ազդեցությունն ու կշիռը բարձրացնելու պոտենցիալ ռեսուրսներ ունի:

Անդրադառնալով վերլուծության բուն նպատակին՝ նշենք, որ մի կողմից ասիական մայրցամաքում և առաջին հերթին Ռուսաստանում ու ԱՊՀ տարածքում հրեականության ռեսուրսների կենտրոնացումը, Ռուսաստանի հայության համայնքային կյանքի կտրուկ ակտիվացումը և միջազգային դերի բարձրացումը, մյուս կողմից՝ վերոնշյալ երկու միտումների կարևորումը Ռուսաստանի ղեկավարության կողմից առաջնակարգ նպաստավոր նախադրյալներ կարող են հանդիսանալ երկու համայնքների միջև համագործակցության ակտիվացման համար: Մյուս կարևոր նախապայմաններից մեկն էլ այն է, որ հարցում շահագրգռվածություն են ցուցաբերում թե՛ Իսրայելի, թե՛ Հայաստանի պետական բարձր շրջանակները՝ թեև այլ խնդիրներից ու շահերից ելնելով: Սակայն կողմերի միջև երկխոսության կայացման հարցում ձևավորվում է մի կարևոր գործոն, որի առկայությունը կարող է ապահովել կողմերի միջև ընդհանրական շահերի դաշտ: Ինչպես արդեն նշվեց, վերջին ժամանակներս ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը բացասական հետևանքներ է թողնում ԱՄՆ հրեականության քաղաքական, ֆինանսական կապիտալի ազդեցության վրա՝ ուղեկցվելով լուրջ գաղափարական տարակարծություններով: ԱՄՆ հանրապետականները, կրկին պայմանավորված Մերձավոր Արևելքում ԱՄՆ շահերով, լուրջ ճնշումներ են բանեցնում իշխանության ղեմնկրատական ճամբարի վրա, որը և ներկայացնում է Միացյալ Նահանգների հրեականության առավել համախմբված ֆինանսական վերնախավը: Արդյունքում, ինչպես նկատում է ամերիկյան վերլուծաբանների մի զգալի մասը, արմատական, կարելի է ասել՝ նույնիսկ հակադիր վերափոխումների են ենթարկվում նաև այդ իսկ ընտրանու գաղափարական, աշխարհաքաղաքական դիրքորոշումներն ու շահերը: Մյուս կողմից՝ նման տեղաշարժերն, իհարկե, չեն կարող չանդրադառնալ Իսրայելի պետության արտաքին քաղաքականության և ընդհանրապես պետական շահերի վրա:

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ